

2. Zwölftausend-Jahr



ՀԱՅԻՒՄ

ԷՆԸԻՄ

891.99

6166

2-20

Համարացույց
Անձանի Կոթող

13/IX

18/ix

16

89199

չ-20

ԱՅՈՒԳԼԱՄ Է 1961 թ.

Հ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ.

ԱՆՀՈՒՆԻ ԷԶԵՐՈՒՄ



Ես հպարտ եմ անհուն

Ես անյաղժ կը մնամ...

Հ. ՀԱՄ.



Ս.-ՊԵՏԵՐԱՐՈՒՐԳ
'ԳՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ' ՏՊԱՐԱՆ
1904

Дозволено цензурою. С.-Петербургъ, 5 Ноября 1903 года.



206

Երկնքի Թագունի
Հողուպէս կայծակին
Ես ձօնում եմ երգեր,
Երգերն այս վշտածին...
Իմ հոգին էլ կայծակ,
Ու իմ երգը որոտ...
Ես ձօնում եմ նորան
Այս երգերը ցաւոտ...



ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ինձնից երգես ուզում, երգես խնդուն, վառվռուն,
Բայցես ինչը երգես քեզ համար...

Ես ծնունդս եմ հեռու, ու անմէջ, ու անտուն,
Սուգ մըուր եմ ըմպել անդադար...

Կրծքիս տակ ես սնել եմ ըղձեր ու տենչանք,
Իսկ ձեռիս ունեցիլ թուլութիւն...

Ինձ օտար է եղել աշխարհի միշտ բերկրանք,
Ինձ նեղել է յաճախ գերութիւն...

Եւ ամեն մի հնչիւն լարերիս տխրամած
Միշտ անձուկ ու վշտոտ է երգում...

Ա՛խ, եղբայր, տես, չորս կողմն է դաժան, մռայլուած,
Ողջ աշխարհն է ողբում ու սգում...

Տես, պայթում է որոտ, որոտի յետեից,
Եւ որքան են թօշնում ծաղիկներ...

Օ՛, որքան վառ յոյսեր ու տենչանք բերկրալից
Սին-խոնաւ գերեզման են մտել...

Ի՞նչ երգես ես խնդուն, քնարով իմ տխուր,
Երբ որ վիշտն է հսկայ, և անհուն են ցաւեր...

Ի՞նչ երգես ես ուրախ, երբ աշխարհը հանուր
Այդքան պարզ է սգում օր-վիշեր...

II.

Այն հաւքեր, որ աշնան
 Չուեցին մեզանից,
 Խիտ-խամբով ու ծիւ-ծիւ
 Երևում են նորից:

Բոյը-համբոյը ծաղիկներ,
 Որ անշան թօշնեցին,
 Ոսկեցօղ—ժպտաւուն
 Փէլփլում են կրկին...

Ես յոյսով եմ առ միշտ,
 Որ կը դայ սուրբ դարուն,
 Հայրենիք, կանցանէ—
 Քո ամօթ—դերութիւն...

Մեծատունը անմիտ
 Թող հաստատ դիտենայ,
 Որ խղճուկն էլ մի օր
 Վառ դարուն կը տեսնայ...

Կը վերցնեմ ես անվախ
 Դրօշակն իմ ծածան,
 Դու բախտին դէմ առ դէմ
 Կը սպասեմ այն դարնան...

III.

Ե՛յ վախ, ազիւ իմ ընկերներ,
Ծով է սիրտըս ցաւի, արեան...
Ես հէքիմեց դեղ ուղեցի,
Ասաց. քո ցաւն է անդարման...

Եւ այնուհետ վիզըս ծռած,
Դարձայ սարին, ժէռ—քարերին,
Որ դեղ անեն սրտիս սուղ-լաց,—
Դեղ չը գտան իմ ծով դարդին...

Յոյսս մարած, հողով դաժան,
Հեռու կեանքի փայլ ափերից,
Անսէր-անմէր, ըղձով կործան
Ես շրջում եմ այն սև օրից...

Ե՛հ, կեանք սգւոր, սիրտ իմ սև-ցաւ,
Ձեզի էլ բախտ չի վիճակուած...
Ե՛կ, իմ քնար... Բեղնով վաղուց
Ձեմ երգել կեանք վշտից էրուած...

IV.

Էս կեանքը սե՛ր բանդ, էս կեանքը մուժ խուց,
Ազատը սիրող ի՛նչ ես որոնում...

Ձեռքերիդ շղթայ, կեանքիդ ծանր լուծ,
Հերիք չէ այդքան սպում ես, հեծծում...

Ա՛հ ազատութիւն... կեանքից էլ դու վեր,
Մտքից էլ դու վեր... Եթերը քեզ դահ...

Տենչ ու բոց սրտիս պապակը անծէր,
Վեհ ազատութիւն անհուն ու անմահ...

Ջարնեմ նեղ ու մուժ կեանքիս կապանքին,
Փշրեմ ու ապատ թափով սլանամ...

Արծուի պէս վեհ, ամպերի փէշին

Սուրբ ազատութիւն գրկեմ ու երթամ...

V.

Դարդիս հետ մեն-մենակ ես կանգնած եմ սզւոր.

Ճրջապատըս տիրում է դադար...

Ու անմէր, ու անսէր, ու հոգով վիրաւոր

Ես դիտում եմ իմ շուրջ, սեւ աշխարհ...

Չատ հեռու մժապատ աշն սարի լանջերին

Հովիւները կրակ են արել.

Եւ քուլայ-քուլայ ծուխ դէպի վեր, ջինջ երկին

Բարձրանում է տխուր, անարգել...

Ջինջ առուակը ողբով, սրտմաշող քրքիջով

Եւ լալիս, և վազում է հեռուն...

Ծաղկաւէտ, ոսկեղօծ արտ-մարդեր անխռով

Լուռ խորհում ու տխրում են անհուն...

Սևաթոյր ամպերի մի հատիկ կարաւան

Տրտմայոյզ հետեւում է լուսնին.

Պսպղուն վառ աստղերը խոկում են անձայն

Ու իրար են նայում վշտաղին...

Դարդիս հետ ես կանգնած եմ մենակ դաշտի մէջ,

Ճրջապատըս տիրում է դադար...

Այն անմէր եմ, անսէր... և իմ ցաւն է անշէջ,

Ու դիտում են իմ շուրջ, սեւ-աշխարհ...

VI.

ԲԱՆԱՍՏԵՂԵԻՆ

(Նմանող.)

Այնտեղ, ուր խրոխտ լողում են ամպեր,
Անկուսար երկնի ջինջ-նինջ էջերում,
Այնտեղ քո երգին յստակ, անվհե՛ր,
Անհուն հեռաստանն է ականջ դնում...

Օտար երկրային սև-ցաւ դաշտերին,
Քո երգը այնտեղ հնչվում է արձակ...
Հեռու ավերից կեանքի վշտածին,
Մեղյուշ է լսում այնտեղ քո նուազ...

Այնտեղ քո կոչին աստղեր շողշողուն
Մերթ ձայն են տալիս զողիչուղ, կամաց...
Անհունի ծոցում քո երգին հնչուն
Արծին է լսում թևերը փռած...

VII.

Ա Ի Ե Ր Ա Կ Ն Ե Ր Ի Մ Է Ջ.

Իմ չորս կողմ ալեհեր ընտլթեան բեկորներ,

Յիշատակ ու մոխիր անցեալի...

Մարդկային խուսափուկ բախտի լուռ վկաներ,

Սրտմաշոճ կես, պատուհեր վշտալի!...

Յուշերի դաշտերից առ յառէտ սլացած

Մի վառ օր այստեղ կեանք էր եռում...

Այստեղ կար մեծատան ապարանք փառապանծ,

Ու անմէր խեղճերի հեծեծում...

Գուց՝ այստեղ արծաթուն զիշերներ սիրահար

Սպասել է սիրոյ տեսութեան...

Իսկ այնտեղ զուց՝ եղել է շքեղ մի տաճար

Աստուծոյ կամ ուսման—գիտութեան...

Կայծակի սլէս անցել են դարեր ու տարիք,

Ու ողջ կեանքը աճեան է փոխուել.

Էլ չը կայ այն օրից կենդանի մի հատիկ,

Ողջն անցել է, առ միշտ կործանուել...

Եւ իմ միտքը այս սուգ-պատկերի առաջին,

Դարերի անթափանց մշուշից,

Արդ՝ հասնում է ծերոճիկ հնութեան օրերին,

Երբ աստ կեանք էր եռում աղմկալից...

VIII.

ԸՆԿԵՐՈՋՍ ԳԵՐԵՋՍԱՆԻ ՎԵՐԱՑ.

Դու անցար քո փշոտ սեւ-ուղին,
Փուչ-կեանքում թողեցիր վշտի ծագ.
Հողի գիրկը անդորը է, անդին,
Մունջ քնիր դու անոյշ, անվրդով...
Քնիր, մահը օրօր է ասում...

Ճուտ կը դայ և զարունը ալ-վարդ,
Դաշտ-հովիտ ոսկեզօծ կը զուգուն.
Քեզ թփեր կը զրկեն ժպտազարդ,
Ու վերադ գով-հովեր կը սահեն...
Քնիր, մահը օրօր է երգում...

Յօդ-ցոյուած արծաթուն առաւօտ,
Վշտածոր, ստուերոտ և գիշեր,
Քո վերայ քաղցրաձայն ու թախծոտ
Կը խօսեն սիրակէզ Բլրուլներ...
Հանգիր, մահը օրօր է կարգում...

Անխուսափ տարիներ կը սահեն
Դէպ մշուշն անցեալի անսահման.
Ու բոլորն անխուսափ կը մտնեն
Վիճակուած և անվիշտ զերեւման...
Քնիր մահը հանգիստ է կոչում...

IX.

Կ Ա Յ Ժ Ա Կ Ն Ե Ր.

Սեւթոյր, խտացած,
 Վշտածոր—վշտածին,
 Կնճռոտ—կսկծոտ,
 Մշտալուռ ամպերի
 Ցաւ-արիւն կամարում
 Զանթահար-դալարուող,
 Հրարուղիս—բոցավառ,
 Հեղուածե—պսպղուն,
 Ու երկին ու եթեր,
 Ու տարերքը ճեղքող,
 Ուղեշունչ—կատաղի
 Կրակէ կայծակներ,—
 Որ իբրեւ բնութեան,
 Զշմարտի զօրաւոր
 Վհհապանծ—փառահեղ,
 Անսահման—անսասան
 Վսեմ-լոյս—յաղթանակ,—
 Եւ իբրեւ փառաւոր,
 Մտքից-վեր, ոյժից-վեր
 Անսահման—անկողար
 Գեղեցկի յաղթութիւն,—
 Ոգու-պէս, հոգու-պէս
 Զախրելով մեղսաւոր
 Սին-ունայն աշխարհի

Դժնաշունչ երեսին,—
Տապալում էք, այրում
Ժէռ ու քար, չար-խաւար,
Ու կեանքեր, ու սրտեր...
Դալարուէք, բռնկուէք
Անապատ ու դժոխք
Կրծքիս տակ, հողուս մէջ...
Ու վարնէք, ու փշրէք,
Ու անհետ կործանէք
Վշտի ժայռը սրտիս...

II.

Բնութեան արքանդի
Զօրադոյն դուք ծնունդ...
Հարազատ—ճշմարիտ,
Անվհեր—անսասան,
Խաւարի յաղթարար,—
Բնութեան ահաւոր
Մշտափառ դաւակներ,—
Արեւիք, արեմուտք,
Ու հիւսիս, ու հարաւ
Մտքի պէս սաւառնող,—
Վհափառ—կայծաթոր,
Մըրկի ու կռուի,
Ու յոյսի, ու լոյսի
Բոցափայլ—վառվռող
Անդարդանդ մարգարէք,—
Աստուծոյ վեր գահից

Մինչ երկիրը մեզսոտ
Փայլատակ—բոցկլտող,
Յաղթանակ—կայծակներ,—
Պապակած է հողիս,
Ձեզ կարճ տ է հողիս...
Ծաւալուէք, դուք յաւէտ,
Անսահման պարփակուէք
Մըրկի միշտ ծարաւ
Սե—խաւար իմ հոգում.

III.

Կայծակներ, ձեզի պէս
Դալարուել եմ ուզում
Ովկիանի փրփրող,
Ցնձղալի—արցունքոտ
Մթին կործքը անհուն,
Որ այնտեղ, ջրերի
Ահարկու անդունդում
Մոռանամ ու թաղեմ
Այս ունայն աշխարհի
Մանրոգի ցաւ—հոգսեր,—
Ու նորից բոցաձև,
Ոգու-պէս, Հոգու-պէս
Վառվռել, բռնկուել,
Ու եթերը անհուն,
Հոծ կամարը երկնից
Շանթահար հարուածի
Գոռ թափովը ճեղքել,

Եւ հասնել Աստուծոյ,
 Աներե, վեհապանծ
 Աստուծոյ Սուրբ Գահին,
 Ու լինել յայտարար
 Ու թարգման մարդկային
 Փուշ-կեանքի չարիքին...

X.

Ռ. Մանուկեանից.

Եւ ես սիրել եմ, սիրի՛ր նաև դու
 Մեղյուշ—երփներանգ զարդերը գարնան,
 Թռչնած թփերի սօսափը վշտո՞ւտ
 Ու սուրբ կոչնակը վերջին հանգստեան...

Եւ ես սիրել եմ, սերի՛ր նաև դու
 Այտերը դալուկ, խօսքեր դալկացող,
 Եւ տխրազգեստ այն վեհ լուսթիան
 Մեղեղին մեռնող...

Եւ ես սիրել եմ, սերի՛ր նաև դու
 Վսեմ պատրանքի, ցնոր երազի
 Տապնապը մահու.

XI.

Ես հպարտ եմ անհուն
Ես անյաղթ կը մնամ...

Ես հպարտ եմ անհուն,
Ես անյաղթ կը մնամ...
Ես գերուած՝ կապանքում,
Եւ իմ սիրտը հրդեհ,
Եւ իմ կուրծքը ժէռ-քար,
Եւ իմ կուրծքը երկաթ,
Եւ սակայն ես անյաղթ,
Եւ անյաղթ եմ առ միշտ...
Եւ հոգիս բարձրութիւն,
Ես հպարտ եմ անհուն
Ես անյաղթ եմ, մենակ...

Վեհութեան դաշտերից
Չէկ-շանթի երակով,
Անհունի ափերից
Փայլակի հարուածով
Ինձ տրուած է վեհ-ոյժ,
Մեծութեան անյաղ կիւրք,
Կիրք հզօր սրբազան...
Ինձ տրուած է վերից
Անսահման զօրութիւն,
Եւ հոգու լայնութիւն,
Ես ազատ եմ հոգով,
Ես հպարտ եմ անհուն,
Ես գերի եմ... սակայն

Ես հպարտ եմ յաւէտ...

Իմ հողին անկուպար

Անհունին մտերիմ.

Իմ հողին է լոյսի

Պապական ռւ ծառաւ...

Եւ անծայր է, անհուն

Առաքաստը հողուս...

Եւ հողուս զօրապոյն

Ահարկու բոց-կրքով

Կամեցել եմ յաճախ

Այդ լաջվարդ լազուրից

Բոյլ աստղերը պոկել...

Բոյլ աստղերը պոկել,

Հողուս խորքը նետել...

Եւ ստէպ իմ հողին

Կարօտել է անհուն

Կործանիչ մըրկի...

Ես եղբայր մըրկին՝

Հարազատ եմ նորան...

Կարօտել եմ ես մերթ

Կայծակին, որոտին...

Ու ես մերթ իմ հողու

Լայն հպարտ բոց-կրքով

Կամեցել եմ կայծակն,

Ու որոտն, ու մըրիկ

Անհունի լանջերից

Իմ հպարտ վեհութեամբ

Անջատել—գողանալ՝

Եւ հողուս անդունդում
 Ծրարել ու թաղել...
 Ես գերի եմ հիմայ,
 Բայց ինչ էլ որ լինի,
 Ես գերուած էլ լինեմ,
 Եւ նորից անսահման
 Խորութեամբը լցուած՝
 Ես ունեմ զօրութիւն,
 Ես գերուած եմ... սակայն
 Ես հպարտ եմ անհուն...

II.

Ես գերուած կապանքում,
 Ու ձեռքերս շղթայ,
 Ես գերուած եմ առ միշտ,
 Եւ սակայն ես անյաղթ,
 Ես հպարտ եմ անհուն...
 Կաշկանդուած եմ թէկուզ
 Արիւնէ ամպերից,
 Երկաթէ ամպերից,
 Վշտաժայռ ամպերից
 Սեահիւս վանդակով,
 Եւ թէկուզ իմ վերեւ
 Բնաւին չեմ տեսնում
 Կենսուրախ լոյս—արեւ,
 Բայց էլի ես անյաղթ,
 Ես ունեմ զօրութիւն,

Ես հպարտ եմ անհուն...

Եւ այս միտքը դաժան,

Այդ գոռ միտքը խոժոռ,

Որ սե-ցաւ վանդակիս,

Վշտաժայռ ամպերից—

Սեահիւս վանդակիս

Մօտ կանդնած է այդպէս,

Եւ այդ միտքը, որ միշտ

Ու կեանքեր, ու սրտեր

Տապալուծ է, գերում.

Կաշկանդում է իսպառ,—

Այդ սե միտքը ահա

Ինձ ուզում է յաղթել...

Կլանել է ուզում

Հոգուս կիրքն ու նորա

Անսահման լայնութիւն...

Ու չռած, ու զայրոյթ

Կատաղի աւքերով

Ինձ յաղթել է ջանում...

Անսահման, անսասան,

Կայծակից էլ արագ,

Ոգու պէս, հոգու-պէս

Չարանենդ, դաժան միտք,

Ես գերուած եմ... սակայն

Ես հպարտ եմ անհուն,

Ես անյաղթ կը մնամ...

III.

Եւ այդ գոռ, հոգեճինշ
 Վշտի դէն անբարբառ,
 Որ կանգնած, տհարկու
 Հարուածներ է ուղղում,
 Չանթ հարուած է տալիս,
 Սպառնում է նա ինձ,
 Սպառնում է անծոյր...
 Օ՛, տանջէ՛ք, չարչարէ՛ք,
 Չանթերով ինձ այրէ՛ք...
 Ես ձեզի անձնատուր
 Բնաւին չեմ լինել...

IV.

Ես կայծակ եմ հզօր,
 Ես կրակ եմ կրքի,
 Յուրբ կրքի Մեծութեան...
 Իմ հոգին զօրաւոր
 Պապական է կռուի...
 Ես գերուած եմ թէկուզ
 Եւ կաշկանդ մարմինով,
 Բայց հոգիս է ազատ...
 Ես գերուած եմ թէկուզ,
 Բայց հպարտ եմ անհուն,
 Ես անյաղթ եմ, մենակ!...
 Ահա և դժնաշուք

Գերութեան սեւ-մրճւր,
 Վշտաժայռ-երկաթէ,
 Կաշկանդիւ-տրորող
 Վանդակիս ձախ կողմից
 Մեն-կանգնած է գծճւծ,
 Մանրութեան դադափար,
 Հեղնութեան արզանդից՝
 Սողալու ընդունակ,
 Անհպարտ, պատուադուրկ,
 Անսահման փոքրութեան
 Համողիւ ապացոյց,
 Ծաղրարժան ու լկտի
 Անմիտ կենը այդ սին...
 Ու ժպտում է նենդուր,
 Ու նայում պուշ-ապուշ,
 Ու շոյում է անհուն,
 Հրասլոյր է տալիս,
 Կախարդել է ջանում...
 Նա դիւթել է ուզում,
 Նա յաղթել է ձլտում...
 Հա-հա-հա! ինձ դիւթել,
 Հա-հա-հա ինձ յաղթել!...
 Օ, հեռու! սողալու
 Ընդունակ արարած...
 Օ, հեռու ինձանից,
 Ծաղրելի դու էակ...
 Ինձ գերել ես ուզում,
 Ինձ յաղթել ես ջանում...

Մանրութեամբըդ գծողձ,
 Փոքրութեամբըդ անհուն...
 Հա, հա, հա! օ հեռու!...
 Հա, հա, հա! Հեռացիր!...
 Ծաղրարժան ու թշուառ,
 Կուրութեան, Թուլութեան
 Ապացոյց—ստոր կին!...
 Ես Լայն-Մեծ եմ հոգով,
 Ես անհուն եմ կրքով...
 Ես գերուած եմ թէպէտ,
 Ես անմէր եմ, անսէր...
 Ես ունեմ զօրութիւն,
 Ես անյաղթ կը մնամ,
 Ես հպարտ եմ անհուն...

V.

Ես հպարտ եմ անհուն,
 Ես անյաղթ կը մնամ...
 Աստուծու նման վեհ,
 Դայժակից էլ թափոտ,
 Անհունից էլ աւել
 Ես հպարտ եմ, անյաղթ...
 Ես հոգով եմ անյաղթ,
 Ես կրքով եմ անհուն...

Ահա և վանդակիս
 Վշտահիւս պատի մօտ
 Գծկողած է թշուառ

Մանրոգի մի էակ...
Դա գծուծ, աներես
Խեղճութիւնն է ստոր...
Օ՛, հեռու այստեղից,
Հիռացիր ինձանից!...
Չո՛ւտ, շո՛ւտ շո՛ւտ... Անսահման
Ամաչում եմ քեզնից...
Ես հպարտ եմ անհուն,
Ես անյաղթ եմ, վսեմ,
Սակայն դու, օ թշուառ...

VI.

Անհամար թշնամիք
Իմ սե-ցաւ վանդակի,
Վշտաժայռ վանդակի
Շրջապատը կանգնած,
Սպառնում են ինձի,
Ինձ յաղթել են ջանում,
Եւ սակայն ես զօրեղ,
Ես հպարտ եմ անհուն,
Թուլութեամբքս միայն
Ես զօրեղ եմ, անյաղթ...
Ես գերուած շղթայած
Վշտաժայռ կապանքում,
Եւ իմ սիրտը հրդեհ,
Եւ իմ կուրծքը ժէւ-քար,
Եւ իմ կուրծքը երկաթ,

Եւ դերուած եմ թէպէտ,
Եւ սակայն ես անյաղթ,
Ես հալարտ եմ անհուն...
Կը կռուեմ, կը մեռնեմ,
Յաղթութեամբ պսակուած...
Անսահման Քաջութեան
Ցնորքին է պատկան
Վսեմ փառքն Աստուծոյ...
Քաջութեան ցնորքով,
Ու ճակտիս վեհութիւն,
Կը կռուեմ, կը մեռնեմ,
Յաղթանակը հողուս...
Ես դերուած եմ թէպէտ,
Ես անյաղթ եմ յաւէտ,
Ես հալարտ եմ անհուն...

XII.

Վ Ե Ր Լ Է Ն Ի Ց

I.

Արիւն-երկն-հեծեծում
Աշիան-սուգ
Նուադման

Սիրտ-հոգիս են այրում
Թախիծով սրտմաշակ
Միաձայն...

* * *

Եւ խոցոտ, տանջահար
Դալկաշիթ իմ սրտում,
Տխուր ժամն
Հնչելիս,

Իմ վաղանց ու թառամ
Ես օրերն եմ յիշում
Ու լալիս...



Ես ընդդէմ հմ նետովում
Այն հողմին նենդ ու թոյն,
Որ իրբեւ
Դալկ—տերեւ,

Կենսարեկ ու տրտում,
Ինձ քշում է անհուն,
Յարատեւ...

II.

Կսկծաբեր սեւ-սոճ գի քուն
Պատել է իմ կեանքը անգոր...
Ըղձեր-յոյսեր քնէք անհուն,
Ես ձեզ կարգամ օրօր, օրօր...

Ու միտքս կոյր, հոգիս կաշկանդ,
Ես կորցրել եմ չարի, բարու
Գիտակցութիւն—լուսի աւանդ
Եւ երգում եմ երգեր մահու...

Վշտի օրրան, ես վիշտ հմ հոծ...
Ինձ օրրում են դադտնի ոյթեր,—
Ու երգում են սեւ կեհսակոծ.—
Բեկ լուութիւն!.. մունջ-լուութիւն!..

XIII.

ԵՐԻԿՈՒԱՅ ԸՍՏՈՒԵՐՆԵՐ...

Ես մանկուց եմ սիրել
Իրիկուայ ըստուերներ...
Իրիկուայ ըստուերներ,
Հուռ մահուան
Վկաներ...

Կեանքի վիշտը երկող
Մահ—կամարը տեսած,
Ու մահու բերկրանքի
Դուք վսեմ յայտարար,
Իրիկուայ ըստուենենր...
Իրիկուայ ըստուենենր,
Վեհ—մահուան
Վկաներ...

Եւ դողդոջը ձեր սուրբ
Գող տագնապն է յոյսի,
Եւ երազ անուրջի...
Ձեր անհուն վշտաէջ
Դողդոջիւն երակում
Ես տեսնում եմ տագնապ
Իմ փարթամ պատրանքի,
Ես տեսնում եմ շիրիմ,

Եւ անխաչ դերեղման
Իմ յոյսի, իմ լոյսի,
Իմ մանուկ ցնորքի...
Իրիկուայ ըստուենենր,
Իրիկուայ ըստուենենր,
Սուրբ մահուան
Վկաներ...

Ես գիտեմ, ես գիտեմ,
Ճանաչում եմ ձեզի...
Ձեր անհուն լուսթեան
Վեհ կամարը երազ
Թափանցել է իմ միտք,
Ձեզ գիտէ իմ հոգին,
Ձեզ յարգում է հոգիս...
Ես գիտեմ ճշգրիտ,
Ինչ ասել է անհուն
Ու թախծոտ միշտ լուս...
Լուսթեան էջերում
Գաղտնացած է լեզու...
Անսահման մի լեզու...
Ես գիտեմ, այդ ցնոր
Լուսթեան խորանում,
Գալիկացող խորանում
Գաղտնացած է կեանքի
Եւ մահուան, ու լոյսի,
Ու յոյսի, հեծեծման
Մեծ Սաղմոսը անհուն,
Ցաւ-Սաղմոսը վշտի...

Իրիկուայ ըստուերներ,
Իրիկուայ ըստուերներ,
Մահու գոռ
Վկաներ...

Ըստուերներ սրտմաշուկ,
Ըստուերներ դալկասուզ,
Իմ հողին-ջերմադին
Ձեզ տալիս է կարօտ...
Իմ հողին ձեզ համար
Սուգ-մըուր է ծծում...
Կեանքի վիշտը երբեք,
Եւ մանուկ անուրջի
Տաղնապի յայտարար,
Սուրբ մահուան քաղցրութեան
Վեհ դրօշը մեկնող,
Յաղթանակը մեկնող,
Անհունի լոկ ծնունդ
Իրիկուայ ըստուերներ...
Իրիկուայ ըստուերներ,
Մահուան Սուրբ
Երազներ...

Սաբից-սար ծաւալուող,
Հոգու կոշը լսող,
Պատից-պատ Սուր-սուրող
Անհուն մահը պատմող,
Չերիմի դաւակներ,
Հողուն թե՛ պարզեող
Անսահման ըստուերներ...

Եւ որքան կամեցել,
Սպասել եմ ես ձեզ...
Սպասել սրտատրոփ,
Որ շուտով սեւթոյր
Մտացիր, վշտացիր
Թուխ գիշերը իրա
Դու գահին կը բազմէ,
Ճակատին դրած վառ
Աստղազարդ իր պսակ...
Որ շուտով կը ծագէ
Ձեր արեւ—սեւ գիշեր,
Կը ծագէ, կարճակէ
Մահահիւս ըստուերներ,
Վշտահիւս ըստուերներ...
Եւ որքան եմ կոչել
Ես ձեզի իմ հողով...
Եւ որպէս եմ սիրել
Ես ձեզի իմ հողու
Անսահման խորութեամբ...
Դալկութեան թաղունի՝
Բազմութեան ցնորքներ
Սուրբ մահուան զաւակներ...
Իմ մանուկ
Երագներ...

Ձեր դողդոջ կամարի
Յաղթանակ էջերում,
Էջերումն այդ անյադ
Որքան սեւ ու կործան

Կեանքերի հատորներ,
Տենչ-սրտեր ու մոխիր
Կան ցոյուած ու ցօղուած...
Մահացող ըստուերներ,
Դեղեցկի վալարում,
Մահ-աշխորհը տեսած
Դալկածին ըստուերներ,
Մեծ Հողու
Ընկերներ...
Իրիկուայ ըստուերներ,
Իրիկուայ ըստուերներ...

XIV.

ՎԵՐՋՍԱԼՈՅՍԻՆ

I.

Արինշաղաղ վերջալոյսին,
Տագնապալի վերջալոյսին...
Վերջալոյսին ես սիրեցի,
Սիրոյ երազ վերջալոյսին...
Սուգ-մոխիրը մեռած սիրոյս,
Սուրբ ածինը սէր անուրջիս
Ես թաղեցի վերջալոյսին,
Խոհ ու խոկուն, խորհրդաւոր
Սրտիս անհուն լուռ խորանում...
Սրտումս է այդ վառ անուրջի
Դերեզմանը — վերան վիշտ-քար...
Դերեզմանն այդ վերջալոյսին

Ես շոյում եմ մահուան յոյսով...
Վերջալոյսը արիւնշաղաղ,
Վերջալոյսին տապնապալի,
Ցաւ ճաճանշով, խորտակ ըղձով
Խնկարկում է այդ գերեզման...
Վերջալոյսին
Ես սիրեցի,
Վերջալոյսին
Սէբս մեռաւ...

II.

Արիւնացօղ վերջալոյսին,
Տապնապ ցոյող վերջալոյսին.
Թօշնած մահուան, կենսոտ մահուան
Սուրբ աւետիս վերջալոյսին...
Ջիւան կեանքի, մանուկ յոյսի
Տապնապ սփրող վերջալոյսին
Վերջալոյսի վշտէ թեով
Անմէր սիրալըս լուր է ստանում
Սէբ մահուանից, մահ տշխարհից...
Արիւնաներկ — ամպապսակ,
Վշտէ ծովին կամար կազմող,
Վշտէ սարին լոյս-յոյս սփրող,
Վշտէ սրտի, վիշտ խորանի
Մահու կողմից սուղ-կառաւար,
Արրասուքի ժայռեր սփրող,
Ամենուրեք թօշնած վարդեր,

Թօշնած սրտեր մերթ փայփայող...
Արիւնաներկ, ամպապսակ,
Անմէր-անսէր վերջալոյսին,
Յնորք ճակտին՝ վերջալոյսին
Հոգիս ծնունց
Սուրբ անհունից.
Հոգիս էրունց
Մե-ցաւ-կեանքից...

III.

Ջինջ օրօրով մահու կոչնակ
Սուգ աշխարհի վերայ ցոյող,
Նինջ կամարով վշտէ մրուր
Մե-ցաւ կեանքի վերայ սփրող,
Հոգի-արեւ աղատութեան
Սուրբ դրօշակ ճակտիդ դրած,
Փառք ու մտքի լայն, անսահման
Երազ ծովում արքայ դառած,
Արիւնաներկ—ամպապսակ,
Անափ-անհուն վերջալոյսին
Ես իմ հոգու լայն թևերով,
Պարզած անյաղթ—հպարտ հոգուս
Առադաստը դէպի եթեր,—
Կայծակի պէս, դե՛ մտքի պէս,
Հեռո՛ւ-հեռո՛ւ եմ սլանում...
Դէպի մահուան մանուկ դաշտեր,
Սուրբ վեհութեան երազ էջեր...

Արիւնաներկ—ամպասլտակ
Սուրբ աւետիս վերջալոյսին,
Դալկութեան մայր վերջալոյսին
Հսկարտ հողիս
Թե է առնում,
Դրկում արեւ
Ազատութիւն...

XV.

Ես կը սիրեմ անհուն տանջանք,
Որ տաղնապն է տենչ ու յոյսի,
Եւ կոծ-հառաչ, արնոտ պատրանք,
Որ կռվումն է մութ և լոյսի...

Ես կը սիրեմ արիւն-ամպեր
Վշտից հիւսուած կրծքի խորշում,
Եւ արցունքի սև-դե ժայռեր
Ցցուած սրտի մութ խորանում...

Ես կը սիրեմ միշտ մեն-մենակ
Ծով դարդերի հետ զրուցել.
Ջինջ օրօրով մահու կոչնակ
Լուռ դիշերին հեռուէն լսել...

XVI.

Կայծակը ինձ նետ՝
Անհունը հողիս,
Աստղերը պսակ—

Դրօշ ճակատիս,
Աստուած լինելու
Յնորքը դէմքիս,
Ազատ վեհութիւն
Պարփակ սրտիս մէջ,
Հեռու սլանամ
Փուշ-փուշ էս կեանքից

XVII.

Ծնունդ անհունի, եղբայր շէկ շանթին,
Հոգիս հոծ-կայծակ, ու սիրտս արիւն...
Ու ես հոգու պէս, ու ես ոգու պէս
Կեանքի ոլորտում շրջում եմ անքուն...

Տիեզերքն անկոպար, եթերը անափ
Մտքիս խորշերում, հոգուս մէջ պարտակ,
Սուրբ սէր եմ տենչում անյագ ու անհաս,
Տենչանքս հզօր,—[թևերըս խորտակ...

Երբ լուռ գիշերին, երկինք աստղալուծ
Անհուն լռութեան ոգի է ցոյում,
Ըզգում է հոգիս սուրբ սէրը անհաս
Ծնոր լռութեան երազ էջերում...

XVIII.

Որդեկորոյս խղճուկ մայրներ,
Ձեր անցունքը դարձրէք հեղեղ...
Արեան ծովեր, վշտէ սրտեր
Սարեր նիւթէք վշտից ահեղ...

Ե՛ւ աղքատիկ, և՛ մեծատուն,
Հոգով Մեծը ու մանրոգին,
Սե՛ր հառաչից, ցաւից անհուն
Պէտք է հիւսեն այս կեանքը սին...

Սուգ-լաց կեանքներ, ասում եմ ձեզ,
Առանց լացի չը կայ դարուն...
Առանց վշտի—կայծակի սլէս—
2ը կայ արեւ—ազատութի՛ւն...

XIX.

Ես կը սիրեմ կըքոտ կեանքի
Արնոտ դաշտեր.
Ես կը սիրեմ վառ-վառ ջանքի
Մարած կոյտեր...
Ես կը սիրեմ յամառ մտքի
Համար դոհուել,
Ես կը սիրեմ հոծ—սլատրանքի
Տազնասլ տեսնել...
Ես կը սիրեմ լոց-տենչանքի
Ըիրիմ շոյել.
Ես կը սիրեմ սէր գգուանքի
Մոխիր ցոյել...
Ես կը սիրեմ հուր կայծակի
Բոյլը ծորել,
Ես կը սիրեմ դառ արցունքի
Ծով հեղեղել...

Ես կը սիրեմ հսկայ վշտից
Ժայռեր կտրել,
Ես կը սիրեմ սև ցաւերից
Սարեր նիւթել...
Խաւար ու տաղնապ,
Դժոխք ու կայծակ,
Վշտածոր կամար,
Հաց-կոծ հեծեծանք,
Դաշոյն սրի պէս
Խօսքեր դժնդակ...
Ես ալդ կը սերեմ,
Ես այդ կը պաշտեմ...

XX.

Բ Ա՛Յ Ր Ը Ն Ի Ց.

Թէ վիրտտ իմ հողու խորքերից
Սե՛ւ թախիծ երևայ իմ դէմքին,
Ինձ համար չը յուզուես, սրտակից,
Չը հարցնես վշտերիս դու մասին...

Իմ ցաւերը ունին ապաստան,
Մշտական իրանց բունը սովոր,
Եւ դէմքիցս շուտով կ'հեռանան
Դէպ' խորանը սրտիս սեւաւճի

XXI.

Հ Ա Յ Ն Է Ի Յ.

I.

Ես շրջում եմ, լալիս անտառում,
 Եւ արագ թռչելով ծառէ ծառ
 Զշնջում է մալ՝վիտը ինձի.—
 —Ասա՛, էր ես լալիս—քո ծիծառ
 Բոյրերից իմացիր. նրանք գիտեն,
 Եւ կարող են պատմել այդ մասին...
 Նրանք դարնան բուն էին կայքերի
 Անջիգեար սիրունուս լուսամտին...

XXII.

Պերճաշուք արևի ցոլքի տակ
 Թախիծով լի հանգած է շուշան.
 Եւ գլխով կամացրել նա թեքուած
 Անուրջում է, սպասում գիշերուան...
 Ու լուսին, շուշանի սիրահար,
 Արթնացնում է նորան իր լոյսով,
 Եւ շուշանը նայում է լուսնին,
 Ու ժպտում իր ծաղիկ թփերով...
 Նա ծաղկում է, վառվում ու փայլում,
 Ու նայում երկնքին միշտ յառած,
 Դողդողում է, բուրում ու լալիս,
 Սիրոյ բոց-կրակովը լցուած...

XXIII.

Երբ խոր ձորում լավում էր խօլ
Ահեղ որոտ, շանթ ու կայծակ—
Եւ սրտիս խոր-վշտից էրուած—
Բոցկլտում էր հրդեհ—կրակ...

Սէր անուրջիս
Մահուան ժամին,—

Երբ լայն հովտում կայծակաթոր
Որոտի հետ հոսում էր ծով
Վշտի—ալեան... Եւ ոռնում էր
Մահ-յաղթանակն իր դէ ձայնով—

Ու բախտը ինձ
Թոյն էր եփում,—

Երբ սև կեանքի վիշտ լանջերում
Տիրում էր սով Ոգու-Հոգու...
Երբ սրտերի նինջ խորանում
Յոյս էր զոհում մահն ահարկու,—

Ոյժի ցնորք
Հայն ճակատիս,

Ես լսում եմ դէ կայծակի
Կրակ ծորող յաղթ շրթերից.—

„ Հեռու քեզնից գարշ—մանրութիւն,
„ Քեզ թե կը տամ իմ երակից...
Որ միշտ հպարտ
Անյաղթ մնաս...

,, Քեզ թե կը տամ Մեծ-անհունի
 ,, Անյաղթ Հողուց...
 ,, Ոսկէ փառքից... Կռուիր անյաղթ՝
 ,, Մահուան պէս դռն և անսահման...
 Տանջանք, արիւն,
 Զոհեր սիրիւր...

XXIV.

Խ Օ Ս Ք.

Ես խօսք կուզեմ շանթի թափով,
 Որ կայծակի կաթիլ լինէր...
 Ես խօսք կուզեմ անյաղթ ու Մեծ,
 Որ անհունի կուրծքը ճեղքէր...

Ես խօսք կուզեմ որոտի պէս
 Մի հարուածով կեանքը փշրող...
 Ես խօսք կուզեմ հզօր, սեւ-դեղին
 Անհունի հետ ինձի ձուլող...





ԱՆՀՈՒՆԻ ՃՈՒՆՉԸ



Ա

Ալեկոծ կեանքի տագնապոտ ժամին
Ու ես թե առայ երազ անուրջից.
Ու ես թե առայ մտքի ու փառաց
Հոգի Աստուծոյ վեհութեան կրծքից...
Ու սե՛ղե՛ մտքիս կայծակէ թափով
Ես յաղթ զարկեցի սրտիս լարերին.
Եւ ահեղ պայթեց կապանքը սրտիս,
Պայթեց-դղրդաց նման որոտին...
Ու ծնունդ առաւ յոյսիս արզանդում
Տենչանքս հզօր սուրբ-նորոգ կեանքի,
Ու սիրտս էրուեց ցնոր հրդեհում
Աստուած լինելու այն անհաս փառքի...



Ու հողին ինձ թե, առադաստս լայն
Ես վեր ճախրեցի դէպ փառաց տաճար...
Անճառ ու անհաս պատուի, մեծութեան
Ցնորքը ճակտիս, տենչանքս յամառ,
Կայծակը ձեռիս ես կանչ եմ ահա...
Կանչ յաղթ Անհունի դէպի վեր—այնտեղ՝
Ուր միտքն է Աստուած, ցնորքը շէկ-շանթ,
Ուր իղձն է անհուն, լոյս յոյսը արհել...
Լաջուարթ լազուրի, աստղերի ծովում,
Կեանքի ցաւ-արիւն դաշտերից վերեւ
Չանթի պէս թափոտ դողանջը ես եմ...
 Դողանջը սեւ-դեւ...

* * *

Էրնէկ, Էրնէկ...

Յոյս-կոյս երազ նինչի ժամին,
Ու բոց-կրակ մտքի անհղ
Լինեմ-թռնեմ մօտըդ, անզին,
Կեանքիս արեւ, ազատութիւն,
Փառաց տաճար, ազատութիւն...

Էրնէկ, Էրնէկ...

Ոսկի անուրջ լայն ճակատիս,
Հոգի-հեղեղ սրտիս ծովում,
Նս իդձ լինեմ, ցնորք լինեմ,
Սուրճմ-ճախրեմ մօտըդ, դարուն,
Կեանքի ժպիտ, ազատութիւն...

*
* *

Բ

Ես փառք եմ սփրում...
 Կաշկանդ սրտերի կապանքը փշրող,
 Ազատ յոյսերի ու նորոգ կեանքի
 Աստուած մտքերը ծորող քնարով
 Ես փառք եմ սփրում...

Ես փառք եմ շնչում...
 Խամրած վարդերի, մարած ըղձերի
 Գարնան նուազով անհաս ու անյադ
 Պատուի մեծութեան անմիտ ցնորքին
 Ես փառք եմ երգում...

Ես փառք եմ երգում...
 Ոսկի անուրջի յոյս-կոյս թևի տակ,
 Մանուկ երազի բողբոջ պսակին,—
 Վեհ աղատութեան դրօշը ձեռքիս,
 Ես փառք եմ երգում...

* * *

Դ.

Հողու սով, Ողու սով ձեր կնճռոտ
Տանջահար ճակատին,
Ու փառաց, ու պատուի ժանտ-պապակը
արնոտ
Ձեր մրուր -սրտերին.

Ու ձեր կեանքը կաշկանդ,
Օր արև՝ չը տեսած...

Ու անմէր, ու անսէր երերում, կսկրծոտ
Եղբայրներ սրտաւիւն...

Հերիք չէ դեղերէք պերուժեամբ շղթայուած,
Հերիք չէ վշտի ծով, սև՝ արիւն հեղեղէք...
Դէպի ինձ, եղբայրներ...

Սփոփանք կը կարդամ ձեր խամրած սրտերին-
Ձեր հողուն ծաւաւած...

* * *

Անհունի արգանդից՝ կայծակի երակով
Ինձ տրուած երգովն իմ աժդըհայ,
Ես անհուն կը կռեմ...

Ու Աստուած հողիններ
Ու կայծակ երազներ, շանթէ յոյս-տենչանքներ
Կը կռեմ ես անդուլ...

Հարազատ եղբարներ...
Դէպի ինձ... գրկաբաց, ճ, ես ձեզ կ'ընդունեմ.
Ձեր այդ գոռ, անհուն վիշտը երգով
Կը մեղմեմ, դարմանեմ...

Ձեզ համար ես փառաց տաճարի,
Այն հպարտ վեհութեան փակ դռները բանամ...
Յաղթ կռուեմ...

Գերութեան ձեր կապանքը փշրեմ...
Հարազատ եղբայրներ...

Ե

Օ՛, թողէք ինձ ազատ...

Դէ՛շ ու դարձ դերութեան սե՛-կսկիծ կամարի
Թուք-մրուր կապանքում,

Ձեր ողջ կեանքը սողալ ու կեղծել սովորած
Մանրոգի դաւակներ...

Ու շուայտ և ունայն տենչերի յետևից
Կուրօրէն մերթ ընկած,

Վեհ հոգու, շանթ հոգու վերջին կայծը վատնող
էս ժխոր, էս գծող աշխարհի շուկայում,—

Յաղթական ըղձերի ու Աստուած ցնորքի
Փառք պատիւը մոռցած՝

Կասկանքի գերիներ... դուք սիրում էք, գիտէք
Հոգով մանր լինել...

* * *

Սրտակոծ շղթաներ ու միայն շղթաներ...
Ձեր զապիր թուլութեան սուգ-մրուրը ծնած,
Ձեր կաշկանդ մտքերին միշտ տիրող ու հսկող
Երկաթէ շղթաներ ձեր բաժինն են միայն...
Ձեր սեւ-սուգ ու դժոխք բաղդի շունչը փչող
Դժնդակ շղթաներ...

Դուք դերի էք ծնուել և սիրում էք յաւէտ
Հէնց դերի էլ մնալ...

Ու թափոտ, ու կայծոտ
Չանթ մտքերը ձեզնից անուահման են հեռո՛ւ...
Ու ես մերթ սին ունայն ձեր սիրոյ գգուանքում,
Մարգարէ իմ հոգով,
Մերթակի Սատուծոյ լոկ անկումն եմ տեսած...
Ու ես մերթ փուշ ու փուչ ձեր սրտի հովտի մէջ,
Հայեացքով իմ Աստուած,
Յաղթանակ ցնորքի ու երազ տենչանքի
Լոկ անխաչ ու անշուք գերեզմանն եմ տեսել...
Դուք դերի էք յաւէտ...
Ու չունէք հոգու թափ...

* *

Օ՛, հեռու ինձանից զաւակներ մանրութեան...
Ես օտա՛ր եմ ձեզի... ես հոգի եմ... Աստուած...
Յաղթանակ ցնորքի կայծակ-նետն անասան
Կարող ձեռս առնե՛մ...
Էն լաջուարթ լազուրից բոյլ աստղերը շողոտ
Մեծ հոգուս վեհ կրքով ես պոկեմ, ու որպէս

Յաղթութեան ու փառաց լուսածին վեհ պսակ
Իմ ճակտին էլ զնեմ...

Ու ահեղ, տալնապոտ կռուածոր ժամերին
Բնութեան լանջերից զոռ մըրիկը պոկեմ,
Դե՛ որոտը խլեմ ու սըտիս անսաման
Եւ անափ անդունդումը թաղեմ...

Եւ Անհունը հողիս, կռուելու ես զնամ...
Անսասան Աստուծոյ հետ կռիւ ու մրցում
Անվեհեր մղելու...

Փառաց կռուքը անհաս... թաղ-պսակ վեհութեան
Հողու պէս յաղթութեան

Անհունից էլ խլեմ...

Աստուծոյ հետ կռուեմ...

Ես հալարտ եմ անհուն,

Ես կայծակ եմ մտքի, ես հեղեղ եմ հոգու...

Ու իմ սիրտը հրդեհ, ու իմ կուրծքը անհուն,
Ես երգում եմ երգեր:

Ես երգում եմ վեհ փառք

Աստուծոյ պէս ահեղ ու անմիտ քաջութեան
Փառածին ցնորքին...

Ես հալարտ եմ անհուն,

Ես կայծակ եմ մտքի...

Ես հեղեղ եմ հոգու...

Օ՛, հեռո՛ւ... միշտ հեռո՛ւ...

Կապանքի գերիններ...

Զ.

Թէ հնար լինէր...

Կապանքը կեանքի դու թափով փշրել,
Փշրել ու դէպի վերեւ սլանալ...

Թէ հնար լինէր...

Եղբայր իմ աղիզ, ճակտիդ կնճիռներ,
Սրտիդ ծով-վշտեր մեծ հրդեհին տալ...

Ես դիտեմ, դիտեմ...

Ով որ ապրել է կեանքում սրտմաշոճի,
Եղել հարկատու վշտածոր բախտին,

Ինչ էլ որ լինի,

Չուայտ շուկայում աշխարհի անձնակ
Անխուսափ ցաւեր մաշում են հողին...

Թէ հնար լինէր...

Կայծակի թափով սեւ-դեւ հողու պէս
Փուշ կեանքը փշրել, եթեր սլանալ...

Եղբայր իմ անդին...

Ծով կեանքը թողնել-ցաւեր փրփրադէզ,—
Թողնել, հեռունեւ ճախրել, սուրսուրալ...

ՀՈԳԻ-ՄԱՅՐԸ

Որդեակ իմ կտրիճ...

Հեռու քեզանից սև թախծատեսիլ էն դժոխք
մտքեր...

Սև ցաւ են նոքա... սուգ մըճըր մահուան
կամարից եկած...

Ու գիտեն նոքա դերեղմանաշունչ իրանց թևի
տակ

Կոյս ըզձեր փըշընել... ջիւան ու ազիւ կեանքեր
խորտակել...

Ու գիտեն նոքա յոյսերը մանճլկ ձգել մահու
դուռ.

Ու գիտեն նոքա ոռկիւ երազներ թաղել շիրմի
տակ...

Կեանքը լոյս է վեհ... գիմացիւր բախտի շանթ
հարուածներին...

Ու քոնն է յաւէտ յաղթանակը վեհ սուրբ
ճմարտութեան...

Դիմացիւր կեանքին, աժդհայ զաւակ...

* * *

Դե՛հ հպարտութեան անսասան կտրի՛ճ...
 Վկայ են ահա ազնւո՛ւ վշտածին ճակտիս
 կնճիռներ.
 Թէկուզ ինչ լինի... ինչ էլ որ լինի էս կեանքը
 մարդկան,
 Բայց կայ ապրելու, անյաղթ կռուելու դաշտ
 երանաւէտ...
 Ես ծեր եմ թէպէտ, ու կեանքը թէկուզ քամել
 է հոգիս...
 Եւ էլի կենաց պարծանք համարուող կռուքերի
 առաջ
 Ես ծունկ եմ չորում... Պատուի, մեծութեան,
 կռուի ցնորքին
 Ես սիրտս կը տամ... Անդրաշխարհային կոյս
 ադատութեան
 Ազիզ-մէկուճար զաւակն եմ ես էլ... ինչ էլ որ
 լինի...
 Կեանքը յոյս է, լոյս... Տանջանքը հոգուդ պսակ
 ճակատիդ
 Նետուիր մեծ կեանքի ահեղ ծովի մէջ!.. կռուիր
 անսայթակ,
 Աթղրհայ զաւակ...



Կայ... կայ վեհութիւն...

Եւ կայ մեծ իմաստ էս վշտամանունդ տանջանքի
ծովում...

Ես շատ եմ ապրել... ես յաղթ եմ ապրել...
հեղեղ եմ հոգում...

Մտածո՞ր ազատ ճակտիս դալկաշիթ կնճիւր
վկայ...

Անհունի պէս մեծ սրտիս երկնքի արիւն
ամպերում

Ցցուած վշտերի ժայռերը վկայ... ես մեծ եմ
եղել

Կայ... կայ մեծութիւն... Անհաս ու ցնո՞ր մեծ
ճշմարտութեան

Յաղթանակը կայ... ու մայր տանջանքի կենաց
տաճարում,

Վեհ աստուածաշունչ ալեկոծ կեանքի սեղանի
առաջ

Ու սիրտդ զոհի՞ր... ու կեանքդ զոհի՞ր... կայ...
կայ սրբութիւն

Այս արիւնշաղաղ, այս պատուապսակ կեանքի
ծովի մէջ...

Ու կեանքդ զոհի՞ր հոգու վեհութեան երազ
ցնորքին.

Իմ իգիթ գաւաճկ...



Եւ վաղ առաւօտ, լուսումով յահին...

Երբ ջինջ լազուրի երազ ծովի մէջ սիրտ սրտի
սեղմած

Մենակ ու մնջիկ խոկում են աստղեր վառ
ոռկեշողուն...

Երբ անուրջ ըղձեր, յոյս-կոյս երազներ անմէր
ու անսէր

Ճախրում են, սուրում թախծոտ դիշերուաւ
կամարի տակին...

Երբ խեղճ մայրերի սրտի խորանում վշտերն են
արթուն...

Ես լայն ճակատիս կնճիռներ դիպած կ'աղօթեմ
երկաւր...

Անմիտ քաջութեան ոգուն ու հոգուն, անհաս
ու անյապ

Փառաց կուռքերին երկար կ'աղերսեմ յանուն
մեծութեան...

Ես ծունկ կը չոքեմ աստուած մտքերի, վեհու-
թեան արքայ

Անհունի առաջ... ես ջերմ կ'աբտասուեմ, կ'աղօ-
թեմ ազնտ,

Կ'աղօթեմ հոգով... որդեակ քեզ համար...



Քո Մայրն եմ ես յաղթ...
 Անհաս Անհունի փառաց տաճարում ծնունդ ես
 առայ...
 Աստուծոյ փառքի արդանդ դարբնոցում Հոգով
 այրուեցի...
 Ես մեծ եմ անհուն... հեղեղ եմ հոգու... կայծակ
 եմ մտքի...
 Ես քեզ թեկ կը տամ... Իմ հոգին քեզ թե՛, և
 ճակատդ լայն,
 Ու լեզուդ հրդեհ... ու ձայնդ որոտ... կայծակը
 քեզ նետ,
 Անհունը քեզ յոյս... զնա կռուելու վեհութեան
 ծովում...
 Կեանքը արին-ծով... վշտերը սև-սև կայծակի
 նման
 Գալարում են գոռ, ճախրում քարկանայթ
 կեանքի ալիքներ...
 Զարնում են անյաղթ վշտերը ահեղ... զարնում
 ու փշրում
 Մանրոգի սրտեր... մանրոգի սրտե՛ր... և դարձ
 ու դժուծ
 Խաւարի զաւակ հիւանդ հոգիներ... մեծ աս-
 տուածութեան
 Անկումը միայն մանրութեան մէջ է... իմ հոգին
 քեզ թե՛
 Կռուելու գնա, որդեակ իմ կտրիճ...

Կա՛յ կեանք, մեծութիւն...

Կա՛յ յամառ կրքի ու կայծա՛կ մտքի անհուն
խորութիւն...

Կայ ե լոյս աղաւտ... Աստուածավայել վեհ
աղատութեան

Յաղթանակը կայ... էս կեանքը դարընոց հողի
կռելու...

էս կեանքն է սուրբ կանչ դէպ Անմահութեան
երազ կամարներ...

Իմ հողին քեզ թե... Անհունը քեզ յոյս... կայ-
ծակը ձեռքիդ,

Առաքաստդ լայն բաց, ազա՛տ արի՛... հպարտ
ոգու պէս

Անհաս նաւակով ճախրիր աջ ու ձախ կեանքի
ծովի մէջ...

Անմիտ քաջութեան ցնորքը պսակ հպարտ
ճակատիդ,

Ահեղ հոգեբուխ դարընոցի զաւակ, գնա՛ կռուելու
Որդեակ իմ իգիթ...

* *

Կա՛յ... կայ կեանք-արե՛...

Կա՛յ իմաստ ու փառք... Աստուած, վեհութիւն...



ԿԵԱՆՔԻ ՈԳԻՆ.

*Բազմած անկղ կայծակի սրակին, սաւառնում է
կեանքի դաշտի վրայով. սաւառնում է և կանչում.*

Եկէք, զաւակներ... եկէք դէպի ինձ...
Օ, տեսնում եմ ես, որքան էք տանջուել,
Որքան կնճիռներ ձեր լայն ճակատին,
Որքան են զիւղուած ցաւե՛ր ձեր սրտում...
Դառնութեան ծովում խամրող իմ սրտեր,
Սե՛սուգ զերութեան ցա՛ւ կամարի տակ
Մռմռող կեանքեր... ծաղիկ հասակում
Գերեզման այցող ոսկի անուրջներ...
Երազ ու փարթամ իղձ-յոյսեր անյագ,
Որ դեռ չքացուած արեան ծովի մէջ,
Վշտի հեղեղում այրւում էք անհետ...
Անմէջ ու անսէր հալածուած խեղճեր
Եւ որդեկորոյս մայրեր սրտմաշո՛ւկ...
Եկէք դէպի ինձ... եկէք սրտաբաց...
Կեանքի լոյսն եմ ես... կեանքի յոյսն եմ ես...
Ես եմ կեանքը... սէր... Ես եմ մեծութեան
Եւ յաղթ վեհութեան հարապատ որդին...
Ես ինքս եմ կեանքը... դու աստուածութեան
Յաղթ շունչը ես եմ... հայէք ճակատիս
Վկայ է վսեմ մեծութեան արգանդ,
Վհհ աստուածների փառքերից հիւսուած

Թագ-պսակը այս, դրած ճակատիս...
Վկայ է սիրտս, որ մայր է անհուն
Հոգու վեհութեան վառ երազներին...
Վկայ է հպարտ Անհունին եղբայր
Այս սիրտը Աստուած, որ վեր է մտքից...
Կայծակը մտքի, ցնորքը փառաց,
Հեղեղը հոգու և աստուածութեան
Իմ մէջ են յաւէտ... Իմ մէջն է հզօր
Կրակն յոյսերի, աղբիւր տենչերի...
Ճակտիս է դրած անյաղթ մտքերից,
Մեծ ցնորքներից, սէր-յաղթանակով
Վառ-ճաճանչակազմ արևը կենաց...
Եկէք, զաւակներ... եկէք սրտաբաց...
Ես ինքս եմ կեանքը... սուրբ կանչ Անհունի...
Փառքի Աստուծուց հրաւէր կ'առնեմ,
Հոգի Անհունից սուրբ ազատութիւն...

Մտքի և Հոգու ծով կը հեղեղեմ...
Տիեզերքը հանուր ուղի իմ թափին.
Կայծակի թևով, մտքից էլ արագ
Արշալանք կ'անեմ պէսլի վեր... այնտեղ...
Արշալանք կ'անեմ դէպի մեծութիւն...
Դէպ աստուածութիւնն անհաս ու անճառ...
Եկէք, զաւակներ... ևս լոյսն եմ կենաց...
Ես ձեզ կը տանեմ անհաս հեռուներ...
Կը տանեմ փառաց աստուածանման
Տաճարը ցնոր... ևս ձեզ կը տանեմ...
Եկէք, զաւակներ... կայծակից արագ,
Հոգու պէս թափոտ սլանանք դէպ վեր...
Ես ձեզ առաջնորդ... եկէք դէպի ինձ...
Հարազատ որդիք...



**ԱՆՀԱՍ ԳԱՐՆԱՆ
ԸՂԶԵՐԸ.**



Ա.

Դէշ-գարշ մանրութեան գծուծ զաւակներ
Սև-սուգ զերութեան կնիք ձեր ճակտին
Դուք զիտէք միայն սողալ ու կեղծել,
Դուք չէք ծարաւում պատուի Անհունին
 Ձեր հողսը ունայն՝
 Ձեր սիրտը զաժան...

Լոյսը հարազատ սուրբ հպարտութեան
Օտար է ձեզի, արժէք չունեցող,
Կոչումը անհուն վեհ աստուածութեան
Մուցել էք առ միշտ, արել ոտնակոխ.
 Ձեր յոյսը չնչին՝
 Ձեր վիշտը կեղծ—սին...

Հեռու բնաւին... պատիւս՝ անհուն,
Անշափ ես հպարտ, ըղձերով Աստուած
Սրտիս խորանում հողի մեծութեան
Ես ձեզի իսպառ եղբայր չեմ ծնուած...
Կոչումս անեղ
Յոյսերս ահեղ...

Ես գիտեմ սիրել յաղթանակ յոյսեր
Անհունի պէս դուռ, կայծակի պէս վառ,
Անուրջի թեով ես գիտեմ շոյել
Վշտեր ու ըղձեր, ազատ ու յամառ...
Իմ ցաւը անհուն
Իմ սիրտը արիւն...

*
* *
*

էս լուռ գիշերին
Յոյսերս են նիրհում
Արցունքէ ժայռից
Սրտիս խորանում...

էս մունջ գիշերին
Վշտէ ծովի մէջ
Ցնոր իմ ըղձեր
Սուգուած են անվերջ:

էս նինջ գիշերին
Ողբակոծ հողիս
Ցօղում է, ցոյում
Չիրիմն անուրջիս...

էս ջինջ գիշերին
Կենաց խորանում
Սիրոյ երազի
Բոյլերն են մարում...

էս լալ գիշերին
Տենչանքս ջիւան
Իջնում է մահու
Սև սուգ գերեզման...

էս խոր գիշերին
Կեանքիցս էրուած
Քուլայ-քուլայ ծուխ
Կելնէ առ Աստուած...

էս մեղմ գիշերին
Սիրող սրտերից
Ծորում է դժոխք,
Արիւնէ կսկիծ...

էս սուգ գիշերին
Սրտերից անմէր
Երկինք են ելնում
Վշտահիւս ժայռեր...

էս ցաւ գիշերին
Սիրոյ տագնապում
Սիրակէզ վարդեր
Խամրում են միռնում...

էս հեղ գիշերին
Աստղերը ցիր-ցան
Վշտէ ծովի մէջ
Հողում են անձայն...

էս բոյլ գիշերին
Ովկեանի խորքից,
Հերանց պէս ահեղ
Ծնվում է կսկիծ...

Էս փայլ գիշերին
Լռութեան ծոցում
Կանչում է յաւէտ
Մահը անտրտում...

Էս լուռ գիշերին
Յոյսերս են նիրհած...
Էս մունջ գիշերին
Ըղձերս են մարած...

* * *

Գ.

Ս.ժդհայ եղբայր,
Ի՞նչ ես որոնում
էս գծուծ կեանքի
Սև-ցաւ ոլորտում...
Պատիւ, թէ անոն...
Կամ աստուածածին
Գող հպարտութիւն—
Պարծանք վեհ ճակտին...

* * *

Իզուր է եղբայր,
Ցնոր երազներ,
Անհաս ու անյադ
Մանուկ անուրջներ—
Մանրութեան արզանդ
Կեանքի ափերում
Ձը կա՛ն... էլ չը կա՛ն...
Ձուր ես որոնում...

Քո անիւր սեւ կայծակից,
Ունես ճաղեր, մտքէ-շանթեր...
Քո սոնակը դեւ-կեղծիքից,
Ունես հրեղէն խայթոց բեռ...
Ըռնչն Աստուծոյ քեզ ղեկավար,
Աշխարհը ողջ քեզ օթեան,
Պտտվում ես անհաս-անճար,
Ծորում շարժում տիեզերական...
Մանիր-մանիր իմ ճախարակ,
Դուռ-ժամանակ

Ժիր են մարդիկ... մտքով խիզախ
էութիւնս կուգեն դիտնալ.

Կուգեն լինել հողի-անկախ,
Ճշմարտութեան դաշտը բանալ...
Որպէս լալկան վիշտ-ուռենին
Իր ճիւղերը առ միշտ թեքուած
Էլ չի կարող շիտկել կրկին,
Սյդպէս մարդիկ տենչով լցուած,
Խիզախ մտքի կամարի տակ,
Սնկարող են ինձ ըմբռնել,
Մանիր-մանիր իմ ճախարակ,
Վեհ-ժամանակ,
Մանիր քուլայ-քուլայ կեանքեր...

Հէնց առաջին կեանքի օրից
Մարդը ուղեց ինձ ըմբռնել,
Քեզ նիւթեցի ես իմ կրծքից
Մտքի թափին արդելք լինել...
Հէնց այն օրից անխոնջաբար
Ժիր մանում ես զոռ քուլաներ
Եւ մանածից մարդկանց համար
Սխալանքի ծորում ծովե՛ր...
Թել-օրերից, ցաւ-ժայռերից
Սե-ստութեան նիւթած ծովում
Մարդն է լողում իւր ծննդից,
Յաւէտ տանջվում, յաւէտ խարվում...
Մանիր-մանիր իմ ճախարակ,
Գոռ-ժամանակ
Մանիր կեղծիք սուտ դժնդակ...

Միջուկդ լիք դժոխք-արիւն,
Հողիդ լցրել եմ կոյր կամքով...
Քո մանածն են՝ երկինքն անհուն,
Արար աշխարհ իրա փառքով...
Մանիր անհաշտ չարն ու բարին
Ժանտ ներհակով իրանց անյագ...
Թող ծաղրարժան մարդիկը սին
Իրանց ցնոր մտքով խորտակ
Քո մանածը տենչան պատռել,
Ճշմարտութեան դուռը գտնել...
Մանիր-մանիր իմ ճախարակ,
Յաղթ-ժամանակ,
Մանիր կեղծիք հաստ ու բարակ...

Թշուա՛ւ մարդիկ... անմէ՛ր սրտեր,
Դուք սնվում էք ստութեան մէջ...
Ձեզ դիւթում են վառ-ցնորքներ.
Ձառ երազի դաշտեր անվերջ...
Թագաւորներ ունայն կեանքի,
Խաբուած դիւթիչ և խուսափուկ
Երազ փառքով՝ դեռ մերթալի
Կռիւներ են մղում անձուկ...
Սհեղ կռուի դաշտերն արիւն
Վրէժ ու դատ են մրմնջում...
Որդեկորոյս մայրերն-անտուն
Արցունքի-ծով են հեղեղում...
Եւ այդ ցնոր դանձն ու պարծանք,
Ազատութիւն, սուգ-գերութիւն,

Անուրջ ըղձեր ու պերճ պատրանք
Գայժակաշունչ թափովդ անհուն
Գործանում ես, առ միշտ փշրում
Եւ այդ ողջը միայն խորտակ
Մարած-մոխիր անիւն դարձնում...
Մանիր-մանիր իմ ճախարակ
Դող-ժամանակ,
Մանիր դժոխք, մահ ու կրակ...

* * *

Դ. Ա. Ր. Բ. Ի. Ն.

Մտքէ կայծակներ ծորող քաջ դարբին,
Որ կեանք ու հոգի զիտես միշտ կռել,
Ինչո՞ւ, ասո՞ւ ինձ, գործադուլ, անհոգ
Կռան-զնդանին դադար ես տուել...

Կայծակին նայիր,
Ճակատդ լայն բաց,
Ու կարող ձեռքով
Նետիր շանթ հարուած...

Ու զարկ... զարկ անվերջ երկաթէ սրտեր,
Աստուած-հոգիներ կռող կռանով...

Այդ աստուածաշունչ զնդանիդ վերայ
Թող ծնունդ առնէ շանթէ մտքի ծով...

Անհունին հպարտ
Հարազատ եղբայր
Ջնդան ու մուրճով
Հրդեհիր աշխարհ...

Տիեզերքը հանուր հողեշունչ դարբնոց
Ոգեծին արդանդ կռանն ու զնդան...

Կայծակը քեզ ձեռք... ու սիրտդ որոտ,
Կռիր ու կռիր... կռիր յաւիտեան...

Աշխարհը արար
Գարշ գծուծ զանգուած
Կրակիր... դարձրո՞ւ
Միտք հոգի կռած:

Հագուրը լաջուարթ աստղերով ցիր-ցան
Դարբնոց-երազին թող փառք նուագեն.
Մասիսն-Արագած, և լեան, և հովիտ
Քեզնով կրակուած թող հողի շնչեն...
Մանրութիւն-կեղծիք,
Ու 2արն, ու Բարին,
Թող ի մի կազմեն
Հրաշունչ հոգին...

Դարբին քաջարի, ճակատդ սղատ,
Վերցրո՛ւ յաղթ կռանն ու զարկ զնդանին...
Ու զարկ... զարկ անդուլ, կռիւր ու կռիւր...
Որ գծուծ աշխարհն առնէ իւր ուղին...

* * *

Միայն քեզ, որ չը կամս, չը կամս...

Կեանքի արև անյաղ-անհաս...

Բոց-յոյսերիս մահ-տաղնապին,
Ըիրիմի մօտ իղձ-փափազիս,
Շանթ-մտքերիս ցնոր թևին,
Տեսած եմ քեզ, հոգի կեանքիս...

Ախ քեզ, լոկ քեզ, ծնունդ-ոգի,

Սհեղ-երազ անհաս փառքի...

Պերճ երազի դաշտի միջին,
Կայծակ-տենչի կամարի տակ,
Ըէկ-շանթերի գալար ծոցին
Տեսած եմ քեզ մտքով անյաղ...

Ախ, քեզ ծծեմ... կայծակաթև

Ոսկէ անուրջ, տենչ-հոգու դե...

Սիրոյ երազ վերջալոյսին,
Սրին պսակ սոմբերի մէջ—
Համբոյր-լաջուարթ ցնորքի ափին
Տեսած եմ քեզ անհուն, անվերջ...

Ախ, կեանքս է սին, տենչս անդօր,

Գաշկանդ հոգով, սիրտս սզուր...

Ջարնեմ կեանքիս դարշ կապանքին,
Կայծակ-յոյսի թափովն անդ
Փշրեմ... հասնեմ թափառ ըղձիս,
Բոց դերմարդին հօր-անեղ...

Երազ շանթերի արգանդը ինձ մայր.
 Ցնոր Անհունի ղօղանջը հողիս.
 Սրտումս զայրոյթ-մըրիկ ծրարած
 Ինձնից ես վանեմ աճիւնը կեանքիս,
 Ու որպէս հողեծին,
 Աստուծուն էլ նման,
 Կանչ լինեմ Անհունին,
 Կանչ կենաց, փրկութեան...

Ե՛ւ շունչ, և՛ հողի աշխարհի համար
 Անուրջ-վեհութեան ոսկի դաշտի մէջ.
 Նիւթեմ ցնորքից անհաս ու անյադ
 Փառքի ու սլատուի ապաստան անշէջ...
 Եւ կանչեմ մոռացուած
 Վեհ յոյսերն յաղթանակ,
 Արթնացնեմ կորուսուած
 Ու տենչանք, ու փափաղ...

Ղօղանջը հողուս թող լսուէ յաւէտ...
 Աստուած լինելու հրդեհում կենսոտ
 Կռեմ ես անդուլ... կռեմ կեանք-հողի,
 Կռեմ ու կանչեմ յոյսերը կայծոռ...
 Վեհութեան դաշտի մէջ
 Ես նոր կեանք սլարտիկեմ...
 Կանչ-հողովը անշէջ
 Մարդ—Աստուած ես կռեմ...

Ը

I

Մէկ—փունջ անուրջ դալկածրար
Ցոյեց—ցօղեց իմ վեհ հոգին.
Լոյս—կոյս երազ—սիրոյ քնար
Դիւթեց ըղձերն իմ խանդագին.

Եւ վշտաբուխ ջինջ—նինջ պահին.
Ոսկի ցնորք լայն ճակատիս,
Ես ուխտ արի փառաց կուռքին
Կեանքեր կռել շանթով երգիս...

Որպէս վեհ կոչ, ես այն օրից
Կեանքի խաւար գարշ ոլորտում
Լարը երգիս շանթ—կայծակից՝
Երգում եմ յաղթ, հոգի կռում...

*
* *

II

Կրակ փողով հալարտ սրտիս
Սուրբ ճիշ ճչամ ու կանչ կանչեմ,
Յաղթ Անհունի զօղանջն հողիս՝
Սիրոյ պսակ երգից հիւսեմ...

Սատղեր ցիր—ցան, երգով դիւթուած.
Լաջուարթ լաղուր ու շանթ որոտ
Հլու են ինձ, սիրով լեցուած,
Իմ կանչն է յաղթ, հղօր-թափոտ...

Դէշ աշխարհի սին դաւակաց
Սուրբ կանչ կանչեմ պատուի, փառքի,
Կանչեմ յաւէտ, հողի դառած,
Կանչեմ—այրեմ ցաւեր կեանքի...

թ.

Սիրոյ պստիկ արշալոյսին
Վեհ փունջ ժպիտ ծփաց հողիս...
Դողդոջ աստղեր խիտ — խմբովին
Ողջոյն տուին անյաղ սրտիս...

— Ո՞ւր է, եարաբ, անդարձ կորել
Հսկարտ սրտիս իղձը մանուկ...
Երազ աստղեր, դուք չէք տեսել
Իղձը հողուս վառ — խուսափուկ...

Ս. աստղերը վառ ծով երկնքից
Զինջ օրօրով մեղմ ժպտացին.
— Սնմէր երգիչ, քո խանդալից
Իղձը զոհեց քո նազելին...

Ես չեմ պապակում
Սյս ունայն փառքին՝
Սին մարդուն յատուկ...

Ես չեմ ծարաւում
Սյս զծո՛ւծ պատուին
Կեանքումը անձո՛ւկ...

Հերիք է, որքան
Վարժուեցինք սողալ
Կեանքի սրտմաշուկ
Նիստուկացի մէջ...

Հերիք է, որքան
Դիտցանք մոռանալ
Աստուած դառնալու
Սուրբ կանչը անշէջ...

Յրեմ ինձանից
Մանրութեան փոշին...
Զարնեմ վեհ սրտիս
Վշտէ կապանքին,
Փշրեմ ու երթամ...

Պատիւս անբիծ՝
Հասնեմ Անհունին...
Փառքը ցնորքիս
Չոյեմ ջերմագին
Ու Աստուած դառնամ...

ԺՍ.

Կայծակի նման
Ամպերի միջև
Խաղալ հոմ սիրում...
 Փռթորկի պահին
 Աստուծու առջև
 Վառուել հոմ ուզում...
Ովկեանի ափին
Ժայռերի պէս դե
Խոկալ հոմ տենչում...
 Դժոխք մըրկին
 Կայծակը ինձ թե
 Թռչել հոմ սիրում...
Բարկաճայթ ալեաց
Զայրոյթը սև-դև
Ծծել հոմ տենչում...
 Սև-դև հոգու պէս
 Կեանքից էլ վերև
 Ճախրել հոմ ջանում...
Կենաց տաղնապին
Անուրջն հե-ի-հե
Ձոյել հոմ սիրում...
 Ձէկ շանթը ձեռիս
 Սրտերը սին սև
 Փշրել հոմ ջանում...
Վեհութեան դռներ
Մարդկութեան առջև
Բանալ հոմ տենչում...

Կերթամ, մէրիկ, կերթամ հեռուն,
 Կերթամ մենակ մեն-հաւակով,
 Մտքի թևով, լոյս-հզոռ պէս,
 Սղատութեան ոգին ինձ թե,
 Կը սլանամ կայծակի հետ,
 Կը փաթաթուիմ, գրկեմ նորան.
 Ըռնչս նորա շնչին խառնած,
 Հոգիս տուած բոց-երակին,
 Կերթամ, կերթամ ես կռուելու.
 Զարնեմ, փշրեմ, անյաղթ մեռնեմ...
 Հոգիս յանձնեմ կռուի հոգուն,
 Մեռնելուց յետ անմահ մնամ...

Կայծակների հանդոյցի մէջ,
 Ըէկ-շանթերի կամարի տակ
 Թող միշտ լինի ինձ գերեզման,
 Անմահ, հալալտ, յաղթ, գերեզման.
 Նորա վերայ մըրիկների
 Այն ահարկու հզօր ժամին,
 Անհունն-Սատուած երգ կը երգեն,
 Երգ անվհեր, ազատածին
 Անմտութեան ու քաջութեան...

Ճակատս լայն, մըրիկն հոգիս,
 Սռազաստս լայն կը բանտմ...
 Նոր-կայծակը կարող ձեռքիս
 Անհունի ծոց կը սլանամ...

2է, մէրիկ ջան, ես չեմ կարող
Դարձ մանրութեան կամարի տակ
Ապրել-մեռնել... Եւ փոքրութիւնն
Մտքի-հոգու կեանք համարել...
Կեանքն է կռիւ, կռուի ցնորք,
Երազ կռուի ու մեծութեան,
Աստուծոյ հետ հողի-մրցում՝
Մեծ լինելու, մէկ լինելու...

2է, մէրիկ ջան, ես չեմ կարող
Ապրել-մեռնել առանց կռուի...
Ես կը դնամ... Անհունի ծոց,
Ուր սաւառնում են յաղթ-ազատ
Կռուի ցնորքն, եսի հոգին,
Կեանքի ժպիտ, ոսկէ արեւ...

—Թող, բալայ ջան, դաժան մտքեր...
Ցաւ-դժոխք են նոքա իսպառ,
Մահ են շնչում ու մահ սիրում...
Սեւ-սեւ մտքեր, արեւ մտքեր...
Սնէժք-մահուան շունչը հոծ-կոծ
Մըռլը-դժոխք, վշտի ժայռեր
Փանտ մտքերի մէջն են լուծուած...

Իմ մէկուճար ազիզ բալայ,
Խղճա՛ կեանքդ, խղճա՛ քո մօր...
Տես, ես թաղուած եմ վշտառատ
Դէ՛ջ ծերութեան կապանքի մէջ...

Յուսակտուր, վշտածաւալ
Մըուր-դժոխք այս օրերին
Մէկ յոյս ունեմ, մէկ լոյս ունեմ,
Որ աստղի պէս կենսախորտակ
Իմ ծերութեան մութ երկնքում
Փայլում է վառ, ինձ կեանք տալիս...
Այդ դձու ես լոկ, իմ մէկուճար...

Վաղ առաւօտ, արշալոյսին,
Երբ կոչում են աստղերն իրար,
Երբ վշտի ցօղն երկինք-գետին
Նոր պատում է մշուշաձև,
Երբ անժխոր է ողջ աշխարհ,
Ես մեն-մենակ ու ծնկաչոր
Սուրբ Տիրամօր առաջ երկա՛ր,
Ջերմ կաղօթեմ ու կարտասուեմ,
Որ այդ դժոխք սե՛ մտքերից
Դձու, որդի ջան, ազատ լինես...
Ես լալադին, ջերմ կաղօթեմ,
Որ խնդիրը վշտասնունդ
Քո դժբախտ մօր երկինք հասնէ...
Հողմի թևով, ամպի փէշով
Երկինք զնայ, հասնէ Տիրոջ...

Ա՛խր, բալաս, սե՛ ցաւ կրծքիս
Մըուր վշտով եմ քեզ սնած,..
Դառ արցունքս ժայռ եմ շինել,
Բուն եմ դրել ժայռի վերայ,

Մեծացրել եմ քեզ այդ բնում,
Հաց-հառաչս երգ եմ արել,
Սյդ սուգ-երգով եմ քեզ պահել...
Հիմայ ինչ հող ես տամ գլխիս,
Առանց քեզի ինչպէս ապրեմ...

Ե՛կ, որդի ջան, եկ, մի գնա.
Սիրտս մեծ է, օվկեանի պէս,
Սնտեղ վշտի, ցաւի ծով կայ...
Քո սե-ցաւն էլ տո՛ւր ինձ, որդիս,
Ես այդ ցաւը իմ խոր սրտի
Մուժ անդունդի մէջ կը թաղեմ...
Որ այնտեղից նա դուրս չելնէ,
Նա դուրս չ'ելնէ, քեզ չը մաշէ...

— Զո՛ւր է, մէրիկ, ես չեմ կարող
Ասլըն-սողալ... Ինձ այլ յոյսեր,
Սյլ ցնորքներ են միշտ կոչել...
Թո՛ղ ինձ, մէրիկ, հեռո՛ւ գնա,
Էլ չեմ կարող այսուհետեւ
Ես թուլութեան որդի լինել...
Ես կը դնամ, հուր-կայծակին,
Կուրի ահեղ սուրբ հանճարին
Որդի լինեմ... Նորա ինձ մայր,
Ինձ յոյս, ինձ լոյս... հողիս կռիւ...
Ահա և նա...—

Կայծակակազմ, արիւնպսակ,
Կսկծացօղ ու լեռնաձև,

Ոգիացած ամպերի տակ
Խրոխտ-հսկայ լեռանց միջև
Յուզվում է բարկ, որոտագին,
Դե-զայրոյթից փրփուր հալած
Ծովը հուժկու, — ծովը կատաղ...
Եւ ալիքներն այն ահարկու, —
Երբ երկնքի խոր արզանդից,
Որպէս հեղեղ, շանթ ու կայծակ
Որոտ-փալակ են յորդ թափւում, —
Ճիչ են տալիս, զայրոյթ առնում,
Հոգի դառցած, ողի դառցած
Խօլ աղմկում, կռւում են դռ,
Ջանում դէպի երկինք նետուել
Դէպի երկինք կայծակաթոր,
Նորա ահեղ կուրծքը ճեղքել,
Դե մըրկին, սեւ մըրկին
Յաղթ ու արի կռիւ մղել...

Եւ սուրբ կռուի, և կեանք-կռուի
Այն անասան յաղթութեան դե
Հուր-հանճարը ծովի վերայ,
Որպէս կարող յաղթ զօրութիւն,
Որպէս Աստուած կռիւ-կեանքի,
Կայծակահիւս հրեղէն կառքով
Արագ ճախրում է երկնի տակ,
Ջարնում, փշրում արար-աշխարհ...

Կայծակաշունչ, կայծակաթե
Գոռ մրրկի հանճարը դե
Նետվում է վեր, և աջ, և ձախ,
Որպէս կարող Սաստուած-հոգի...
Նա դարձնում է, շանթահարում,
Այրում-փշրում արար-աշխարհ,
Եւ սար, և ժայռ, և միտք, և կեանք...

Իսկ հանճարի խօլ զարգանդից.
Սհ-սարսափից ողջ-լնութիւնն
Հառաչում է... Անտառ ու սար
Սհից դողում, կուռում են մերթ...
Եւ ամեն ինչ, ամեն էակ
Մահուան անեղ տաղնապի մէջ
Աղօթում է, երկինք յառած.
Աղօթում է մրրիկ կուռին...
Եւ հուր-կռուի անեղ ծոցից,
Ահով բռնուած սար ու ժայռից,
Սուգ է լսվում, ողբ արձակվում,
Ճիշ-աղաղակ, լաց թուլութեան...

Իսկ հանճարը ճախրում է յաղթ
Ու մահ սփրում և աջ, և ձախ...
Եւ բարկ ծովի աստուածարժան
Ոգիացած ջրերը գոռ
Սրի-անվախ եռում, փրփրում,
Աղմկում են հուժկու, անեղ,
Եւ ջանում են մութ երկնքի
Կուրծքը ճեղքել...

—Այդ ահարկու, կենսակործան
Հանճար-կռուի, մըրկի մէջ,
Պարզած հողուս, Աստուած հողուս
Առաքաստը աղատութեան,
Առաքաստը ցնորահիւս,
Աստուածարժան վեհ քաջութեան,
Մտքով հողի, տենչով հողի,
Եղբայր շանթին ու մըրկին՝
Աստուածաշունչ, կայծակահիւս
Կարող եսիս, Սնյաղթ եսիս.
Հայն, հոգեթե առադաստէ
Նաւակիս մէջ ես մեն-մենակ
Կը լողամ զո՞ռ, լողամ անվերջ,
Հողամ այնաղթ ու լեռնաձև
Այդ բարկահայթ ալեաց միջին...

Ներքեա ծով, կռիւ-զայրոյթ,
Վերաս հեղեղ շանթ կայծակի,
Ես կը լողամ, ես կը գնամ...
Միայնութիւնն ընձի ընկեր...
Ահ-կռիւր ինձ սփոխանք...
Կերթամ հեռուն, լողամ անհուն,
Ծծեմ կայծակ, ծծեմ մըրրիկ...
Ես մեն-մենակ խօլ կռուի մէջ,
Անմտութիւնն ինձի ընկեր,
Ես մեն-մենակ ներքեա ալիք,
Վերաս կռուի ահեղ հանճար...

Տես, մէրիկ ջան, մի ականջ դիր
Հոգի ալեաց այդ քաջ երգին.

Մի ականջ դիր աստուածարժան

Ազատորդի այդ ջրերին

«Միայնութիւն, Աստուածութիւն,

«Մենակ եսի կայծակածին

«Հուր բոցկլտոց կարողութիւն,

«Կեանքին դու լոյս, կեանքին արեւ...

«Մենակութիւն, կռուի ցնորք,

«Մենակ-կռիւ եսին Աստուած.

«Երազ կռիւ դե քաջութեան,

«Մտքի հրդեհ, սրտի որոտ,

«Ազատ մարտի վեհ զաւակներ...

«Հողին ձեզ թե, Աստուծու պէս

«Փառաց պսակ ձեր ճակատին...

«Մենք երգում ենք քաջութեան երգ...

«Փառք ու պսակ անմտութեան.

«Մենք երգում ենք անհաս, վեհ փառք

«Խօլ քաջութեան դե ցնորքին...»

ԺԳ

Լացէք մայրեր...

Ձեր սուգ-լացը կելնէ երկինք...

Աղի-լեղի ձեր արցունքից

Գազմէք հեղեղ, արիւնէ ծով

Եւ ողողէք կեանքը-կսկիծ...

Լացէք մայրեր...

Յանուն դերի ձեր զաւակաց

Դառ արցունքից կտրէք ժայռեր,

Ժայռեր սև-դե, կենսոտ, խօսուն,

Որոնք ծծեն կեանքի ցաւեր...

Լացէք մայրեր...

Եւ թող լսուէ սուրբ արցունքի

Արիւն-ալեաց վեհ մեղեդին...

Մեղյուշ երգով յուզուեն ալիք,

Փարուի արցունք դե ժայռերին...


Լացէք մայրեր

Դոռ մըրիկի ահեղ ժամին

Թող շէկ-շանթեր կայծակաձև

Մերթ գալարուին արեան ծովում

Ու վիշտ երգեն Աստծու առջև...



ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

Թէ կայ գարուն,
Կայ յեծութիւն,
Հ. ՀԱՄ.

Գ Ա Ր ՈՒ Ն

Ինչո՞ւ ես վիզը ծուռ
Ու կաշկանդ դու հոգով...
Ինչո՞ւ եմ քո աչքերն արնաշիթ,
Քո վեհ սիրտն է խռով...
Օ՛, հեռու քո ճակտից
Այդ ամպերը դժգոյն.
Հաւատա՛ ինձ, ինչ էլ որ լինի,
Պիտի դայ սուրբ դարուն...

Որքան էլ գերութեան
Կործանիչ շնչի տակ
Կոյս-յոյսերը մեռնեն... ու ծփայ
Արեան ծով դժնդակ...
Որքան էլ գեղ վարդեր
Մտնեն ցոլրտ գերեզման...
Բայց հեռու էլ լինի... պիտի դայ
Չօգոտ կեանքը դարնան...

Տենչկորոյս եղբայրներ,
Իր ահեղ կապանքում
Հոգու սովն է ձեզի կաշկանդել.
Եւ մաշում է... այրում...
Բայց ազա՛տ, քաջարի
Նայէ՛ք դէպ՝ արշալոյս...
Ու ցրէ՛ք ձեր սրտից մանրութիւն...
Կայ դարնան ոսկի յոյս...

Արևի ցուքերից
Դրօշակ կը հիւսնամ..

Մեծութեան ըղձերից վեհ պսակ՝
Լայն ճակտիս կը դնեմ,
Կը սպասեմ... երազներ
Կը շոյեմ ես անհուն...

Որ փառաց ու կենաց... և նորոգ
Մեծ կեանքի զայն զարուն...

* * *

ԲԱՆԱՍՏԵՂԵՐ

Եւ իմ սիրտը դժոխք... և իմ կուրծքը արնոտ...
Ու ես ծունկ չոքեցի վշտաբուխ գոռ կեանքի
Սեղանի առաջէ՛ր...

Ու կեանքի դաշտերից, ու սրտի խորանից
Սե՛ր ցաւի ու արեան մտացիւր գոռ ամպեր,
Որպէս լայն կնճիռներ, ու եկան դիպուեցին
Իմ ազատ ճակատին...

Եւ որպէս փոթորիկ... և նման կայծակին,
Ու կեանքի, ու մտքի գոռ հեղեղն հարցերի,—
Հոգեմաշ հարցերի,— մոռնալու դժուրաց
Ու վարկեց իմ կրծքին...

Այն հեղեղը անհաս և անյաղ հարցերի
Էս կեանքի էութեան... Այն մըրիկը՝ հոգին
Կաշկանդող՝ դժնաշունչ հարցերի... Մոռնալու
Ու պայթեց հոգուս մէջ...

Եւ աչերս չռած... իմ աչերն արնաշիթ...
Ու հայացքս պղտոր... Եւ ցաւոտ իմ դէմքից
Սուգ-դժոխք էր ծորում... ու ճակտիս տարածուած
Վշտահիւս, կնճռոտ ամպերի շարքերում
Մերթկայծա՛կ էր ցոլում... սե՛ր կայծա՛կ էր լողում...
Ու ես համը էի... լալ...

Կեանքի ծովն իմ առաջ ալիքներ էր նետում,
Հեռնապէս ալիքներ... կոհակները անդ
Կատաղած... փրփրած... ու վշշում... ու լալիս...
Պրճալըճում, որոտում էին գոռ... Եւ ստէպ,
Դեի պէս, նրանք ջանում էին վեր քարձրանալ...
Դէպի վեր... Աստուծոյ... Անհունի այն հզօր,
Անհաս կուրծքը ճեղքել...

Եւ հեղեղ էր թափվում երկնքից... խօլ հեղեղ
Չէի շանթի, կայծակի... որ իբրեւ Անհունի
Անսասան յաղթ նետեր, դալարվում էին գոռ,
Գալարվում մեծ ալեաց լերանց մէջ... Եւ անդ
Հեղեղատը շանթի կտրտում էր թափով,
Փշուր-փոշի էր անում այն լեռները ալեաց...
Եւ կայծակը փշրում էր կեանքի երեսին
Կուտակուած ծով-ամպերը... Եւ մերթ գըրգոց
Ու պայթին էր լավում...

Եւ կեանքի տաղնապետ այդ պահին՝ մոլորուած
Չատ մտքեր դեղերում էին լոկ խաւարի,
Անթափա՞նց խաւարի ճանկերում...
Եւ լոկ սով... կատարեալ հողու սով էր տիրում
Մարդկային վշտերի խորանում վշտածոր...
Եւ որքա՞ն հառաչներ այն անմէր որբերի...
Եւ որքա՞ն սուգ ու լաց մայրերի չարաբախտ...
Եւ որքա՞ն արնածոր արցունքի դե՛ ժայռեր...
Եւ որքա՞ն գերութեան սե՛-մրհր սրտածինջ...
Եւ ճշում էր անդ ազատ խիղճը գերուած...

Ու ճշում... ու կանչում... և երկիրը կաշկանդ
Ցաւերի փոթորկից և Հոգու մեծ սովից
Զարգանդում էր... դողում...

Եւ եկաւ մութ կեանքի էութեան ու մտքի,
Եւ Ձարի, և Բարու, և անծայր տանջանաց
Մեծ հեղեղն հարցերի... և եկաւ դու թափով
Հեղեղատը հուժկու... հեղեղատն հարցերի...
Ու զարկեց իմ կրծքին... ու փշրեց իմ կրծքի
Սեւ կապանքը ցաւոտ, մանրութեան...
Եւ փշրեց ահարկու պայթիւնով իմ հոգու
Ըղթանքը ահեղ... ու իմ կուրծքը բացուեց...
Եւ իմ կուրծքը արինն ու կրակ հեղեղեց...
Եւ լեղուս էլ բացուեց...

Եւ ծորում է ցայսօր իմ կրծքից գոռ հեղեղ...
Արինէ... կրակէ հեղեղատ...
Եւ իմ միտքը հզօր թեւ առաւ, թեւ անհաս...
Այսուհետ ես կրակ եմ սրտով անսասան
Հեռունէր Աստուծոյ պէս անյաղթ ճախրելու...
Այսուհետ ես կայծակ եմ մտքի...
Եւ բացուեց մեծ աղբիւրն այն հպարտ,
Վեհութեան

Լոկ ծնունդ, յոյսերի... ըզձերի...
Ու վառուեց անհուն կիրքը նորոգ, վեհ կեանքի,
Ու վառուեց... ու այրեց... Ես հպարտ եմ, անյաղթ...
Այսուհետ ես հեղեղ եմ Հոգու... Մեծութեան...
Ես Աստուած եմ... Հոգի...

Դէհ, եկէք զէպի ինձ, տանջայոյց կողբայրններ,
ես ձեր վիշտը մեղմեկ եմ սովորած...
Դէհ, եկէք զէպի ինձ, գերիներ կապանքի...
ես կը տամ ձեզի այն, ինչի դուք էք ծարան...
Հոգու թե՛ ձեզ կը տամ... Այն անհաս մեծութեան
Վեհ ցնորքը ձեր խեղճ սրտերին կը ցօղեմ...
Ով ունի հոգու սով... և ում միտքն է կաշկանդ,
Թող դայ նա... Ես կը տամ մեծութեան երազներ...
Այսուհետ ես հեղեղ եմ Հոգով... Վեհութեան...
Ես Աստուած եմ... Հոգի...

Ահ... ո՛րք է... չը կայ...

Սո՛ւտ է, սո՛ւտ... չը կայ իրականութիւն,
Իդուր են անցնում մտքի թռիչքներ...
Իդուր են իսպառ ջանքեր, մտորմունք,
ձգտարտութեան չը կայ և ստուեր...

Չը կայ... ու չը կայ...

Անվորձ պատանի, ճգնող իմաստուն,
Նետէք մոռացման փնտրումները ձեր.
Չը սպասէք բնաւ, թէ մի փայլուն օր
Պիտ արդարանան ձեր ունայն ջանքեր...

Լոկ խտրութիւն...

Ի՞նչ է միտքը մեր... էս կեանքը վշտոտ...
Աշխարհը արար... — պատկեր բեմական...
Հապա ինչ ենք մենք... խեղճ... ողորմելի...
Կատակերգուններ կատակերգութեան...

Սո՛ւտ է ամեն ինչ...

Դիմակահանգէս է տիեզերքը ողջ
Եւ կեանքը ունայն, մոլի կնոջ պէս,
Դիմակաւորուած՝ կեղծիքի ծովում,
Փայլում է... խաբում... ու անվերջ այգւպէս...

Անփորձ հովիներ,

Կեանքի հովտի մէջ իսպառ չէք կարող
Գտնել ճշմարիտն... իրականութիւն...
Սո՛ւտ է ամեն ինչ... սո՛ւտ ու խուսափող.
Կան լոկ դիմակներ... կայ կեղծիք անհուն...

Ես գիտեմ սիրել

Մեղյո՛ղջ երվներանգ զարդերը մահուան,
Թօշնած թփերի սօսափը վշտո՛տ
Ու սուրբ կոշնակը վերջի՛ն հանգստեան...

Թողէ՛ք ես լսեմ

Մտքեր վշտահիւս, խօսքեր դալկացող...
Եւ տխրազգեստ այն Վեհ լուութեան
Գերեզմանաշունչ մեղեդին մեռնող

Ես սիրտս կը տամ

Վսեմ պատրանքի մահու տազնապին.
Եւ իղձս զոհնմ ցնո՛ր երազի
Ու կո՛յս անուրջի մանո՛ղկ շիրմին...

Դէպի ինձ...

Յոյսկորոյս ու անմէր ցաւ սրտեր.
Մեծութեան պապական հոգիներ...

Սրտաւանդ դէպի ինձ,
Թող դայ նա, ով յոգնած է վաղուց...
Էս ունայն աշխարհում սողալուց...

Դէպի ինձ քաջարի,
Գեղութեան թշնամի-կապանքի
Դաւաճան,—ղաւակներ վեհ փառքի...
Ես եմ կուռքը փառաց...

* * *

Ես ըղձեր կը հիւսեմ—բնաւ ոչ
Երկրային,
Երկնքից դողացած, յաղթ-անմիտ,
Երկնածին
Կոյս-յոյսեր ու երազ անուրջներ
Կը քաղեմ...
Յաղթ ու գոռ ըղձերից թագ-պսակ—
Նշանակ վեհութեան—ձեր ճակտին
Կը դնեմ...
Աստուծոյ լոյս—տեսիլ փառքերից
Ու անհաս տենչերից կը խլեմ
Ձեզ համար...

Օ՛, եկէք, ես կարօտ եմ նոցա,
Ու ասլըում է Սատուած դառնալու
Մեծափառ...

Դէպի ինձ խղճուկներ...
Դուք չունէք թռչելու դու թևեր,
Թռչելու դէպի վեր... հեռուներ...

Ձեզ մեկսել,
Բեհուել են երկրին-այս ունայն,
Գէշ ու դարշ աշխարհին մանրութեան...

Ես կը տամ
Ձեզ թևեր եթերումը ճախրել...
Սատուծուն հաւասար սաւառներ...

Դէպի վեր...
Ուր մաքերն են Սատուած... խորութիւն...
Ուր ըղձերն ու փառքերն են անհուն...

Դէպ' երկինք,
Ես կամուրջն եմ հզօր դէպ այնտեղ...
Դէպ նորոգ, վսեմ կեանքը անեղ...

Եղբայրներ,
Հապճեպէք դէպի ինձ...



ԿԵԱՆՔԸ ԹՌԻԶՔ Է.

Աժդհայ և անպարտ ճակատին շարէշար
Մէջքմէջքի արած յաղթ լեռնացած կնճիւղներ...
Եւ իղիթ աշերից արնաշիթ, հրախառ
Հեղեղուող արցունքի բարկաճայթ լայն ծովներ...
Միշտ վկայ են անմեռ... և վկայ են հզօր...
Որ գալիք օրերի անթափանց մէկի մէջ
Կեանքն ունի զաղտնացած վեհ-գարուն փառաւոր,
Թէկուզ ինչ էլ լինի...

Թէկուզ ինչ էլ լինի. ողու սով էլ լինի,
Ամպերն անյուսուլթեան թող անդուլ անձրեւն
Խեղճ, անմէր կեանքերի վշտահիւս կապանքին...
Թող լեռներ ու ձորեր սուգ ու լաց արիւնեն...
Ու ինչ էլ որ լինի. հզօր կեանքը կնճուտ
Վեհ թուիչք է... այնտեղ... շատ հեռուն... դէպի վեր,
Որտեղ միտքն է զտնուում արշալոյս արեւոտ...
Թէկուզ ինչ էլ լինի.

Պատերազմ... ծով-արիւն... գիակներ հեղեղուած...
Թող տէրերն աշխարհի շահամուլ զրպանի
Դերիններ ճանաչուեն... թող անկուշտ, արնախում
Դազաններ հռչակուեն... դեհ-դժոխք թող լինի...
Բայց այնտեղ... ցնորքոտ Անհունի կրծքի տակ
Արշալոյսը կեանքին իղձ-զարուն է հիւսուում...
Մեղ այնտեղ է տանում Ջանթ-Հոգին ի շալակ...
Ինչ կուզէ... թող լինի...

Կռուի դաշտն արնավէժ մոնչայ թող անվերջ...
Դիակներ հեղեղունեն...կոծ հառաչը կեանքի
Փոթորիկ թող լինի... մըրկուէ թող անշէջ...
Եւ շանթեր արձակող գոռ թափից փոթորկի
Երկրագունդը դողայ... թող կորցնէ իր ուղին...
Սնկործան վշտերից կնճռացած դե սարեր
Քաջարի ճակատին թող անբաւ խիտ բսնին...
Սմեն ինչ թող լինի...

Ու գիտէք ըմբռնել, ով մտքի անգօրներ,
Ձեր մտքերը, յոյսերը շղթայ-կապանքոտ
Բանտերի անկիւնումն են բուսած... գերիններ,
Դէշ ու վարշ մանրութեան դուք շնչին էք կարօտ...
Ձեր անթե՛, անթուիչք մտքերին փոքրութեան
Մատչելի է արդեօք, թէ կեաքն ուր է նետւում...
Դէպի ո՛ւր է տանում այս ուղին դառնութեան.
Դերիններ կապանքի...

Պատմութիւնը արնոտ յուշագիր է ահեղ
Կեանքի ճանապարհին... Ճանապարհն այս անծայր
Մերը չէ... մենք անցնում ենք հեռուն դէպ այնտեղ.
Ուր անմեռ Սատուածներ հոգու ծով են ծորում...
Մերը չէ այս ուղին... սա անցւոր է... անփայլ...
Չանթ-հոգին, որ մեզի ի շալակ է տանում,
Ճանաչում է տաճարը փառաց ըղձավառ...
Կայ տաճար փառքերի...

Այս ուղին մերը չէ, մեծ հոգին թեանի
Մեզ տանում է օտար աշխարհի դաշտերով...

Եւ Անմեռը... Անկախը թափով կայծակի
Մեր թռիչքը դիտում է Անհուն իր շնչով...
Այս ուղին մերը չէ... Դժոխք-ճակատագրի
Սահմանումն է ընկած մեր ուղին... որտեղ ծով
Եւ հեղեղ կայ արեան... կրակէ վշտերի...
Այս ուղին մերը չէ...

Փառաց կուռքը ասում է հոգով թոյլերին,
Նոքա լոկ պատմութեան յուշագիր կը դառնան...
Անհաշտ ճակատագրի ծովի մէջ շանթածին
Յը մեռնեն անգործներ... Այդ օրէնք է համայն...
Անխուսափը կենաց լինելու է... իրաւ...
Այդ վեհ կիրքն է անյադ Անմեռի... Անկախի,
Որ ճամբին պատմութեան արեւում է անրաւ...
Այս ուղին մերը չէ...

Այս ուղին մերը չէ, սա կամուրջն փառաց...
Մեր արեւ, մեր կուռքերն այն ափին են... այնտեղ...
Մեր թռիչքն է անհուն... մեր տաճար լոյստարած...
Չանթ-հողին թեանի կայծակոտ և անեղ,
Որ ճախրում է... տանում մեր սրտերն ի շալակ-
Այն յաղթ կիրքն է թափոտ ու հրեղէն... մեծ
անյաղթ
Ապրելու... Տիրելու վեհ տենչանքն է անյադ...
Մեր հոգին է յաղթ կիրք...

Թող կորչի խաւարում դեգերող ու մոլոր
Անթռիչք ու անթեւ մտքերի դաւանանք,

Որ ջանում է ահեղ առաջընթացութիւնն
Կուրուլթամբ բեկանել... ու նորէն վշտաւոր
Սին օրըանը նախնի շիրիմից անպարծանք
Արթնացնել... այդ կեղծիք է... դարձւոր
ստութիւն...

Անմիտներ, ձեր տենչանքն է ունայն... անցաւոր...
Թոյլ մտքին անարդանք...

Ձեզ օտար է թռիչքը կենաց ու մտքի...
Կուրուլթեան կապանքոտ անթափանց ճանկերից
Անկարող էք տեսնել այն արե՛ր կրքի,
Որ խրոխտ մեծութեամբ անբացառ սրտերից
Արեհում է... կոշում... արիւնում է հոգով.
Հեւում արշալոյսուող, ու սրտեր, ու կեանքեր
Չանթաձև բեռող լոյս-զարնան կարօտով...
Մեծ կրքումն են փառքեր...

Մեր հոգին է միակ... ու բոլոր սրտերում...
Նա հեղեղն է կրքի մեծ, արի ապրելու...
Եւ եթէ սրտերի սոմաժօր երկնքում
Արնացօղ ճաճանչի յաղթ-զալար խուրձերու—
Ծովի մէջ արեւում է տենչանք մեծութեա՛ն...
Եթէ կայ հոգու շանթ... ու մտքի հեղեղա՛տ...
Կայ և կիրք ճախրելու դէպի վեր... անսահմա՛ն...
Սէր-տենչանք դէպի վեր...

Անգօրներ, անթափ միտքն է ձեզի վիճակուած,
Եւ անդէտ էք... դժճւած... գիշերուող խաւարի

Կապանքումը ու թոյլ, ըղձերով էլ նեխուած՝
2ը դիտէք դուք իմաստը անյադ սրտերի...
Ի ծնէ կոյր... անմիտ... փառքերի տաճարից
Կը մնաք անբաժին... հոսանքի հետ եկած՝
նոյնանիշ կուրուլթեամբ իջնելու էք բեմից...
Սնբաժին էք փառքից...

Մեր սրտերը... այնտեղ կայ երկինք ու երկիր...
Ամեն ինչ... ամեն ինչ... մեր սրտերը անհուն
Անեղին հայելի են շողճոտ... մտային...
Յաղթ-Անմեռը լաջուարթ լազուրից աստղաւուն
Արններ է շանթել.. մեր սրտումը թաղել...
Մըրկոտ երկնքից շանթ-կայծակը խլած՝
Ըղձերի փաթեթով մեր հոգումն է նետել...
Մեր սրտերն են անսփ...

Այդ կայծակն է յաղթ կիրք արեւի... մեծութեան...
Այդ է շանթադալար ապրելու իրաւունքն...
Որ փարթամ ըղձերի ծովի մէջ, անսասուն
Թե՛ ու թա՛փ է տալիս ճախրելու դէպի կուռքն...
Այն մըրիկն է հոգու սրտերի թագաւոր,
Որ զայրոյթը շանթէ ճակատին պսակած,
Արինել է անվերջ ովկիաննէր վշտաւճիւր...
Այդ մեր կուռքն է փառաց...

Այդ մըրիկ-իրաւունքն է մեր շունչը Անմեռ,
Որ տանում է մեզի դէպ՝ Արե՛ւ ի շալակ...
Ահեղ կիրքն է հոգու, որ մանկադը մահու

Բռնաճ կեանք է հնձում... և ծովեր արիւնում...
Թոյլերին նա ատում է կըքով դժնդակ...
Եւ նոցա, ով անյաղթ է հողով... [Ժոցնում...
Ու թւում է հեռուն... դէպի վեր... արեգակ...
Սղատ կեանքն է [Ժուշք...

Այդ մըրիկ—իրաւունքն է անհաս թագաւոր
Աժդհայ սրտերի և Աստուած տենչերի...
Այդ հողին է ցնոր, որ կեանքի սեւաւոր
Օրրանից արեան ծով ծորելով... ազգերի
Գերեզմանը նիւթեց... ու ազատ սրտերին
Թւանի, ի շալակ դէպ Սահունը բերեց...
Այդ վեհ կուռքն է հողու... ու կեանքի փառածին...
Իրաւունք... իրաւունք...



ԵՐԳՍ ՈՒ ՀՈԳԻՍ.

Արնակարկաչ կեանքի հովտից ծով պսակով
Սնյուսուլթեան դանդաղ ու քարշ ամպերն ելա՛ն...
Գերեզմանուող նինջ լռութեան կամարներից
Սնուրջ ու իղձ հլեղէն թեով դողդոջ առա՛ն...

Մանուկ սրտի սէր-աւետիս վերջալոյսին,
Երբ յուսածին ու կենսատու վսեմ Ոգու
Ըստինքը ջերմ իմ շրթերից էլ հեռացաւ,
Սնսէր հոգուս անարեգակ ծով-երկնքից
Կեանքիս ջահեր, երազ աստղեր
Կայծակաշունչ վշտի թափից
Մէկիկ-մէկիկ ընկան... կորան...

...Ո՛ւր է աւաղ

Այն յաղթանակ տենչանքների
Գարնանաշունչ արե՛ր վառ...

Ո՛ւր է աւաղ

Վեհատեսիլ աստուածների
Երազանքս արշալուսուող...

Թռիչք հոգուս անճա՛ռ... յամա՛ռ...

Չը կա՛ն... չը կա՛ն...

Ու իմ հոգին, որ մեծ յոյսի

Արեգակուող երկինքն էր լայն...

Նման է սին ու փուլ եկած,

Հիմքը խախտուտ, սեւաւո՛ր տա՛ն...

Հեղեղածոր կեանքի դաժան ծանրութեան տակ
Կըքոտ յոյսերն, հողուս սիւները շուտ կոտրա՛ն...
Եւ մտացիր ճաճանչագեղ պատերն հողուս,
Որ մեծ աւեան, աստուածութեան
Հզօր ու դե ցնորքներից էին նիւթուած,
Փլա՛ն... ընկա՛ն...

Եւ այդ անշուք աւերակաց մէջը այսօր,
Ուր մունջ ու յուռ, վշտատեսիլ դերեզմաններ
Վաղաթառամ տենչանքների ու ըղձերի
Դարձած երկինք ըողո՞ք... վրէժ են մըմնջում...
Վհատութեան և սուղ մահու
Սե՛ւ վրաններ են տարածուած...
Անյուսութեան ժայռեր կան դե՛...

Եւ այն խորտակ աստուածութեան աճեան տակից
Ցայտում է յորդ, մահալարկաչ և արնաշիթ
Կենսո՞տ աղբիւր...

Այն արիւնոդ, վշտատարած ակունքներից
Հիւսում եմ ես երգերը իմ բոյլ մարգարիտ...
Իմ երգերն են այն աղբիւրի մշտակսկիծ
Ցայտերը բիւր...



30326r.

I

Իմ կո՛ւռք... իմ աստուած...
 Հողիս հրդեհուեց. քո զոռ ծարաւից.
 Օ... չը կա՛ս... չը կա՛ս... վաղանց իմ դարնան
 Արշալոյսի պէս շողոտ այն շէմքին,
 Երբ հոգուս ոսկի յոյսերի ցանցում
 Չողշողում էր լաղթ Տենչերի արեւ.—
 Ես ծունկ չոքեցի բարկ, ծովանման
 Կեանքի սեղանի առաջ անխնդում,
 Ու սիրտս ուխտեց...կըքո՛տ իմ հոգին
 Այն օրից վեհ-վեր
 Դէպ' լոյսը շողա՛ց,
 Ու միտքս թափառ տիեզերքի ափեր
 Զախրեց շանթաձև...,

II

Իմ կոհուր... իմ աստուած...
Անհունը զրկող յաղթ կայծակների
Բոցաթոյր ծովում սուրբ ծնունդ առած,
Թեքերը մտքիս վեհ-վեհ տարածեմ...
Եւ հեղեղն հողուս,—ոգու հոծ հեղեղ—
Մեղսո՛ւ, սին կեանքի երեսին ցրեմ...
Եւ ցնորքների հպարտ ալեաց մէջ,
Եւ աստեղանիշ յոյսերի բիւրեղ
Կամարների տակ ճախրեմ ու նաւում...
Կաշկանդ սրտերի
Կապանքը փշրեմ...
Առագաստս լա՛յն... փա՛ռքը... կոհուրքը իմ
Յաւէտ որոնեմ...

Տ Ե Ն 2 Ա Ն Ք Ն Ե Ր.

I

Լեռներ, յաղթ լեռներ,
Դաժան ու խոժոռ կեանքի ձորերում
Անվերջ արիւնող զգացմունքներին...

Չանթեր, շէկ շանթեր,
Սև անյուսութեան մըժ-մէջ ամպերում
Դալար արձակող աստուած տենչերին...

Աստուած... էյ աստուած,
Անյագ սրտերից լոյսի ու դարնան
Յաղթանակ մեկնած փառքի ու կուռքին...

Եւ անհունացած,
Ամպերի տակից կեանքի ծանրութեան
Վեհ արշալոյսունղ մեծ ես ու հոգին...

Ելէք շարէշար...
Կայծակ շրթերով ես ձեզ եմ կոչում...
Նորոգ ու ազատ կեանքի էք կարօտ...

Ըղձաւտար
Ղօղանջը անհաս... ու ձեզ է կանչում
Դէպ աստուածափառ կեանքի առաւծտ...

Սշխարհի տէրներ...

Կռանը շանթոտ, մտքին թաղաւոր,
Յաղթ ձեռս առած ասում եմ ես ձեզ,
Անթե, անթռիչք, ըզձազուրկ, մոլոր,
Գծող ճակատներ...

Կապանքը սիրող,
Օտար, անծանօթ երկինք—սրտերի
Աստուածավայել յաղթ ցնորքներին,—
Որ արևում են յանուն կուռքերի.—
Գերիններ մեղսող...

Նայէք սրտմոլոր,
Դերեզմաններին արժան՝ անվայել
Դէշ ունայնութեան մշուշի տակից
Նայէք դէպի ինձ... Հոգու յուսարեր
Ես Մուրճն եմ խոժոճ...

Սրտեր տենչկորոյս,
Հոգեծին մուրճով, ճակատս արեւ,
Սաստում եմ ես ձեզ, սողալ իմացող
Ստոր զաւակաց... իմ երգն է սեւ-դեւ,
Տենչանքս վեհ... լոյս...

Եւ անհունացած,
Կեանքի արշալոյս, մտքերի զեղում
Իմ Հոգի Մուրճով զարնեմ... Կը փշրեմ
Սրտերը աւեր... որ չեն ճանաչում
Ցնորքի Աստուած...

III

Ես վեր կը ճախրեմ
Ճնշող ամպերի խաւար կամարից...
Պէտք չէ ինձ բնաւ
Սողալ գիտնալու դպրոց վշտալից...

Ով մեծ է հոգով,
Ով գիտէ ապրել վստաջ տաճարում,
Անէծք ու դժոխք
Նա պիտ անձրեւէ կեանքին էրերում...

Վահույթեան արև
Յաղթ ցնորքներից հիւսեմ զրօշակ...
Ու միտքն ու հոգին
Կայծակի թելով, կուռքի նշանակ՝

Կարեմ զրօշին...
Ու ձեռս կարող... ճակատս արև,
Հոգու, ոգու պէս
Սուրամ գրկելու ամհասն աներև...



ՄԻՐՈՅ ԺԻՐԻՄԸ

Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ը Կ Ե Ա Ն Ք Ի

1

Ճակտիս խտացած անվերջ վշտերի
Այն ծով ամպերից ես իղձ եմ երգում...
Սրտիս դէզ-դիզուած—առպէս վեհ տաճար—
Հպարտ յոյսերից արև եմ հիւսում...
Անյաղթ ճշմարտի գարուն ցուրբերից
Նիւթում եմ արև կեանքի մեծութեան...
Ապրէք յաղթ, ազատ,
Հոգով էլ մենակ...

2

Ես շատ եմ ապրել... ես յաղթ եմ ապրել...
Ամպեր են ծածկել երկինքը սրտիս...
Փորձանք հալածում, մրհւր գերութեան.
Ժպիտը կեանքի, գայրոյթը նորա,
Որպէս թուխ մշուշ ի մի համակուած,
Պատել են հոգուս կամարը անհուն...
Բայց յաղթ վեհութեան դրօշը ձեռքս,
Կարդում եմ ես ձեզ Ստղմոսը կենաց.
Մենակ ապրելում կայ կեանք ու գարուն...
Ազատ ապրելում
Կայ կոյս վեհութիւն...

Լոյսի, խաւարի անհաշտ մաքառման
 Դաշտի ափերից ես ձեզ եմ կոչում...
 Կեանքի ծանրութեան տակից դառնադին
 Կանչում եմ ես ձեզ, կեանքի կարօտեալ,
 Սնմէր մնացած խղճով եղբայրներ...
 Եթէ ջերմադին ծարաւ էք փառքի,
 Ունայն յոյսերի ժխտը մոռցէք,
 Անմահ շրթերով ես ձեզ կը կարդամ
 Անհաս ու անյազ կեանքի պատուիրան...
 Կըքով յաղթ-աղաւտ,
 Մենակ տալեցէք...

Նայէք ճակատիս որոտ մըրիկին...
 Թուխ-ամպ ծալքերի միջից շանթաձև
 Անյազ աջ ու ձախ ճեղքող-գալարուող
 Կայծակ դարկերին... զայրոյթ նետերին...
 Կաթիլը որպէս անափ ովկիանում,
 Կաթիլ է նոյնպէս մըրիկը ճակտիս
 Հողուս անդունդում ահեղ-բռնկուող
 Մըրիկ—զայրոյթի ծովին համեմատ...
 Եւ ինչ էլ լինի... Թէկուղ ինչ լինի...
 Լսէք սուրբ գարնան յոյս-կոյս աւետիս.
 Եղէք հողով մեծ,
 Անյաղթ ու մենակ...

Վաղանց էն օրից, երբ ես գոռ կեանքի
 Տաճարը մտայ... երբ ես ուխտեցի
 Այդ վեհ տաճարում յոյսի և լոյսի
 Սբէր տեսնել... փառա՛ց, մեծութեան
 Յուրից ու շողքից հիւստւած վեհ արե՛հ,
 Մեծ կուռքը կենա՛ց... Այն իդձ տաճարի,
 Այն լոյս սեղանի առջև ծնկաշոք՝
 Հըթունքս դողդոջ աղօթք մըմնջա՛ց...
 Աղերս վեհութեան, հոգե՛ւ... արեւի՛...
 Եւ կոյս սրբութեան կեանքի երկնքից,
 Ամպի պէս դժգոյն, լոյսի պէս աննիւթ.
 Խորհուրդը կեանքի, կոշումը մարդկան
 Տեսքով յուսաստիւր կանգնեց իմ դիմա՛ց...
 Մըրիկ մոնչաց... որո՞տ դղրդա՛ց...
 Սրտեր պայթեցին արեղ այն պահին...
 — Ես փառքն եմ կեանքի... ես թափն եմ մտքի,
 Արե՛հ մեծութեան... Անհունը գրկել...
 Կրծքում Անհունի ծարա՛ւ ու մենա՛կ
 Խնձի որոնել... ինձի որոնել...
 Ես յոյսն եմ դարնա՛ն...
 Ես կիրք եմ անյագ...

Ազատ, տենչահիւս խորհուրդը սրտի,
 Նման շէկ շանթի, հպարտ հոգու պէս,
 Այդպէս մըմնջաց, մըմունջը փառքի...

Այդպէս շշնջաց կոյս իղձը կեանքի...
Եւ սիրտս, ասես, գող ծով վրդուլուած.
Փրփուրը բերնին հսկա՛յ ալիքնե՛ր,
Ահեղ ալիքներ կեանքի դառնութեա՛ն,
Չարի ու բարո՞ւ... եկան, զարկեցին
Կրծքիս սևամա՛ծ... եկան, նետուեցին
Յոյսիս ժայերին... ու ես ուխտեցի
 Յնորբը կենաց
 Անյա՛գ որոնել...

7

Ու ես շանթակերպ, ու ես հոգու պէս,
Որպէս յաղթ-հեղեղ հոգու և մտքի,
Որպէս լուսածոր դու նետ հոգերուիս,
Որպէս Անհունի վեհ շունչը անհա՛ս...
Որպէս կայծակէ թարգման սրտերի,
Որպէս ահարկու երա՛կ մըրկի...
Ձեռքիս փրկութեան դրօշը մեկնա՛ծ,
Դէմքիս էլ պսակ ոսկի՛ն ցնորքի,
Հղօր, բոցաձև՝ դալար ես առայ,
Ձարկի սրտերի կաշկանդ ըղձերին,
Ձարկի էս կեանքի կըծքին կապանքո՛տ,
Ու վիշտը ցայտե՛ց, ցայտով արնաշիթ,
Հովիտը կեանքի ներկուեց արիւնով...
Եւ ես թե առայ, սե՛ղե՛կ հոգու պէս,
Ու վե՛ր սուրացի դէպի հեռունե՛ր...
Դէպի հեռունե՛ր,
Փառքի երազնե՛ր...

Լաջուարթ լազուրի անուրջ էջերում,
 Անյաղթ յոյսերի, Աստուած մտքերի
 Գարուն վայրերում ես կանչ կանչեցի...
 Թափոտ սուրալով միջևն աստղերի,
 Աստղից դէպի աստղ, արև-արևից,
 Փառքի տաճարներ... մտքի վեհ կուռքեր
 Ես այց արեցի... Յոյսի և լոյսի
 Անհաս ափերից ես փրկեցի փնջեցի...
 Աստղից, արևից, ազատ Անհունից
 Ես յոյս չանթեցի... ճաճանչ գողացայ...
 Ծովում Անհունի—նորա զահլի մօտ—
 Ես ծնունկ չորեցի... աղերս մեկնեցի...
 Արցունքը ծորաց... ու ծով հեղեղուեց...
 Ու ես իմացայ... ու ես իմացայ...
 Խորհուրդը կեանքի
 Հոգով իմացայ...

Ու ես իմացայ... ու միտքս գտաւ
 Անհասը կեանքի... երազը փառայ...
 Թափ-ծափ տուեցի թևերը հոգուս,
 Ու ժգին զարկեցի սրտիս լարերին...
 Արև-արևից... լազուրի ծովում,
 Լոյսի տաճարում պսակ հիւսեցի...
 Խորհուրդը կենաց, իմաստը մտքի
 Երազ պսակի, աստուած պսակի

Միջեր դրի... և ուխտ կապեցի,
 Անճար սրբութեան վեհ ուխտը լոյսի...
 Ու ես իմացայ... ու միտքս գտա՛ւ
 Անհասը կեանքի... ժէռ-քար լռութեան,
 Կեանքի ափերին կանգնած վիթխարի,
 Ցնոր լռութեան տաճարն է խորհուրդ...
 Կեանքի կենսակոծ մրրիկը դիտող
 Բիւրեղ լռութեան զողզոջ խորանում
 Թաղնուած է գաղտնիք... իմաստը կենայ,
 Թռիչքը մտքի... դարունը յոյսի...
 Ու ես իմացայ
 Իմաստը կեանքի...

10

Թռիչքը կենսոտ հոգուս հարազատ,
 Նորոգ յոյսերով բողբոջ այն դարնան,
 Յոյս-լոյս ըղձերով անհաս ճշմարտի
 Ես գոռ մեկնեցի թեւքը հոգուս.
 Ես լայն բաց արի երազ առաքաստ...
 Եւ սուր սլացայ դէս կեանքը արնոտ,
 Եւ հուր ծորեցի դէպ կուռքն աշխարհի...
 Եւ սուրբ լռութեան ես քար կտրեցի,
 Եւ յաղթ հիմնեցի տաճար լռութեան...
 Կեանքի ծովի մօտ, ափին ովկիանի,
 Ու գոռ կայծակնե՛ր, մրրիկ ու որոտ
 Չաչում են, հոսում կեանքի երեսին...
 Ես կուռք հիմնեցի,
 Տաճա՛ր լռութեան...

Այնտեղ, ուր լեռներ, լեռներ աժդհայ,
 Որպէս քաջարի ու սերտ եղբայրներ,
 Հպարտ, մէջքմէջքի տուած, անվներ
 Նայում են դէպի երկինք անկապաւր...
 Նայում ու բողոք զրկում առ Աստուած...
 Այնտեղ, ուր սև-դև ժայռերն ամենի,
 Նօթերը կիտած, ճակտով կնճռոտ,
 Խոժոռ ու անհաշտ նայում են հեռուն...
 Կեանքի ծովափին, ուր յաղթ ալիքներ
 Կեանքի արդանդից, փրփուրը հազած,
 Դալիս են հուժկո՜ւ... դալիս ու կրծում
 Ժէռ կուրծքը տփի... որպէս վայրենի
 Դազան կատաղած, յուզւում են ուժգին,
 Զարկում են, զարկւում... ժայռեր կրծոտում...
 Այնտեղ սևամած կեանքի ծովափին
 Ես խոհ լռութեան տաճար հիմնեցի...
 Երազ լռութեան անհաս խորանին
 Ու սիրտս, սև հողիս
 Ես զո՛հ բերեցի...

Ու ես Աստուծոյ գահից երկնային
 Զանթած լոյս-յոյսերն, երազ անուրջներ,
 Պսակը փառաց, ցնորքներ ոսկի՛.
 Յոյս-կոյս տաճարի վերայ հիւսեցի...

Եւ շուրջը անհաս դարուն տաճարի
 Մեռած իմ ըղձեր, մանուկ երազներ,
 Անդարձ մանկութեան յոյզեր բերկրանաց—
 Այդ ողջը արնոտ հողում թաղեցի...
 Ու շուրջ կապեցին սև-սուգ շիրիմներ,
 Ու լուռ մխացին անմէր իմ տենչեր...
 Խաչի փոխարէն լալկան ուռիներ
 Յաւոտ մրմունջով երգեր հիւսեցին...
 Ու ես քար կտրած, փարթամ լուսթեան
 Խնկէ խորանում դէպ կեանքը դարձայ,
 Դէպ կեանքը դարձայ ազատ ճակատով...
 Խորհուրդը կեանքի
 Հոգով իմացայ...

13

Եւ կուրծքը ուռցուց դուռ կեանքը արնոտ,
 Եռաց... փրփրած արիւն յորձանքով...
 Ալիք լեռնաձև, փրփուրը բերնին,
 Կատղած շան նման ոռնում էին դուռ...
 Ու ես հոգուս պէս փարթամ լուսթեան
 Յնոր տաճարից դիտում էի լուկ...
 Որպէս պարզամած լազուր գիշերին
 Մնխօս ամպերի սգուր կարաւան,
 Որ լուռ ու մնջիկ անցնում է յուշիկ
 Լուսնի առաջով ճամբան ձանձրալին,
 Կեանքի ձորերից, ալեաց անդունդից
 Ելան շարէշար սուգ-լաց, հառաչանք,

Եկան ու անցան աչքիս առաջից...
 Որպէս լուսումնութ պահին վաղորդեան
 Ծիւ-ծիւ թռչուններ շարան ու շարան
 ձախրում են օդում, թռչում են հեռուն...
 Արին-ովկիանի հեռու ամերից
 Յոյեր ու ցուրեր եկան քրքիջով...
 Եկան ու անցան... ու ես շանթակերպ
 Ծոցում լռութեան նայում էի յաղթ...
 Նայում ու լռում,
 Հոգով պապականժ...

14

Եւ որչափ ջիւան կեանքի հատորներ.
 Մրին ալեաց հետ քշուող խառն ի խուռ...
 Ոսկի անուրջի ցրտացած մոխիր...
 Եւ որչափ հալմաշ խղճով հոգիներ
 Հոսանքը ալեաց քշում էր հեռուն...
 Քշում ու նետում ամի ժայռերին...
 Տեսայ ես կապանք... շղթայ... գերութիւն...
 Ամեն, ամեն ինչ տեսայ կեանք-ծովում...
 Կայծակը արնոտ դու ծովը ճեղքող,
 Մրրիկն անսահման շաշում էր անհղ...
 Լեռները ամի տնքում չարաչար.
 Երկիրը անից դողում էր, դողում...
 Ու սիրտը կրծքում խամրում էր անից,
 Եւ յոյսը սրտի տազնապ էր ծորում...
 Ամեն արարած, անշունչ, շնչաւոր,

Ծովում զարդանդի դողում էր անյոյս...

Եւ ես լռութեան փառաց տաճարից

Նայում էի լոկ... Նայում հեռաստան...

Իմաստը կեանքի

Տեսնում յուալից...

15

Եւ շատ դարուններ, փարթամ ճոխութեամբ
Ջառբար պճրանքով եկան ու անցան...

Անթիւ ձմեռներ դժնաշուք շնչով

Տանջանք բերեցին, անհետ էլ կորան...

Եւ շատ, շատ անգամ գարնան գալստեան

Երազ թռչուններ համբոյր քրքիջով

Լոյսի յաղթանակ... արեւ հրդեցին...

Եւ շատ, շատ անգամ աշնան շնչի տակ

Ալ-բալ կանաչներ թառամ թօշնեցին...

Սրտերը խամրած... մոխիր հոգիններ.

Ամեն, սմեն ինչ հզօր ժամանակն

Դժոխք-մահասփիւր իր գոռ թևի տակ

Քշում էր դէպի մշուշն անցիալի...

Եւ ես լոկ նայում էի կեանքերին...

Սնյաղթ փրփրացող

Կեանքի ճակատին...

16

Ու ես իմացայ զալուստը գարնան,

Ու ես իմացայ իմաստը կեանքի...

Մենակ ապրելու անհուն ցնորքի,
 Ազատ ապրելու անհաս տենչանքի
 Երազ խորանումն է փառքը կենաց...
 Իմաստը նորա... խորհուրդը նորա...
 Հեռու ստույգեան էն ծովը դժուծ,
 Որի մէջ լողում, նեխում են սրտներ...
 Մոլտ... սոլտ... չը կա՛յ սէր... չը կայ մերձաւոր...
 Մարդիկ կարող չեն իրար հասկանալ.
 Անկեղծ ու հոգով իրար նուիրուել...
 Այդ սոլտ է, կեղծիք... կայ լոկ միայնակ,
 Ազատ ապրելու ցնորքը կենսոտ...
 Կայ լոկ յաղթ եսի շանթէ դալարում.
 Նման Աստուծուն, եսի թափ-հարուած...
 Միայն այդպիսով դարունը կը դայ...
 Կը գա՛յ մեծութեան խորհուրդը կեանքի,
 Արեան ծովի մէջ, ուր առանց սիրոյ,
 Որ յաղթ վեհութեան անկումն է միայն,—
 Արին ալիքի կարկաչ երգի տակ—
 Ծնունդ պիտ առնէ խորհուրդը կեանքի,
 Աստուած պիտ դառնայ սուրբ եսը հօր...
 Ու ես իմացայ խորհուրդը կեանքի.—
 Ու ես իմացա՛յ
 Թռիչքը մտքի...



Ե Ր Ա Ջ Ն Ե Ր

1

Ես ծով եմ տեսել
Անհունապարփակ, տիեզերքից էլ մեծ.
Անդրանուրջային մտքի հեղեղատ...
Հոծ հեղեղ է այն, սրտի երազած
Անհաս կուռքերի՜... ոգու և հոգու...

Կեանքի կնճռոտ հովտի մէջ անմեռ
Անտես ճրագներ... դէպ աստուածութեան
Բարձունքը դիմող վսեմ ճրագներ,
Կենաց լոյս-ջահներ...

Որ բիւր դարերից ի վեր մշտավառ
Ջերմ յոյս են սփռում անսէր սրտերին...
Դաժան սնդարուն ըղձերին յուշիկ
Արևում են միշտ...

Եւ արնաճաճանշ լուսեղէն վրձնով
Արշալուսում են անյաղթ եսերին...
Ես ծով եմ տեսել անհունապարփակ,
Անդրանուրջային յոյսերի ցանցում,
Որ ողջ կայծակի՜ց... ու ողջ հրեղէ՛ն...
Հոծ հեղեղն է այն սրտի երազած
Արհաս կուռքերի՜... ոգու և հոգու...

Հրեղէն ցնորքիս առագաստը ազատ
 Ու նաւակը մտքիս հեռուններ է ճախրում...
 Աստղերից էլ էն կողմ, Անհունի ավերին
 Ու խոժոռ, ու մոլոր թափառում է հպարտ.
 Ու տեսնում եմ ահա ժամանակը ահեղ
 Անսկիզբ ու անեղ ովկեանոս է փրփրո՞ւն...
 Եւ նորա ալեաց մէջ կայծակի դէ թափով
 Դալարում են, լողում երկիրներ, աշխարհներ,
 Եւ անթիւ նաւակներ...
 Եւ հզօր ալիքները նորա յաղթարար
 Ներդաշնակ ցայտումով և աստուած մեծութեամբ
 Այլ ու ձախ են հոսում...
 Եւ անհաս վեհութեան վէտերում ծայրէ ծայր
 Տարբերում են ահեղ հրակազմ ցնձուղներ—
 Յաղթ դնդեր մշտահոլով...
 Որոնց դռն ովկեանի հուր յորձանքը անծէր
 Իրարու է կապում
 Վսեմ ձգողական զօրութեան ալիքով...
 Ես տեսնում եմ ահա.
 Դարերի անթափանց հրահեր այդ ցանցում—
 Տիեզերածաւալ ու անհուն ալեաց մէջ
 Կայ արար-աշխարհին լոյս սփռող երկու ջահ...
 Կայծակէ երկ-դարբնոց, որ հողի է կռում...
 Երկ-դարբնոցը երազ հոգեբուխ է, անշէջ...
 Երկ-արեւ է հիւսում լուսատու և անմահ,
 Երկ-արեւ, որ համայն աշխարհի հոգեկազմ

Սուրբ պատրոյքն է հզօր...
 Պատրոյքն է այն թափուտ կեանքի,
 Կայծականիւ սոնակը հուր,
 Որ շանթ բոցով, ազատ կանչով
 Կռուժ է վեհ հողին հանճէր...
 Այն իղձն է զու կըքոտ փառքի,
 Ճակտին ճրագ հուր-պսակով,
 Մեծ ոշխարհի տենչանքն է յաղթ,
 Յոյս-լոյս սփրոդ ողջ բնութեան...
 Հեղեղ է այն սև-դև եսի,
 Փառածաւալ ալեաց նման,—
 Համայնական կենաց լոյսի
 Սունակը-բոց... կայ „ես“ միայն
 Եւ լոյս տենչանք հասարակաց...





ՎԵՐՋԱԲԱՆ



ԳՆԱ ԻՄ ԳՐԻՈՅԿ...

Պատրաստ ես, զբրոյկ, զնա՛ շահասէր, ժխորատեսիլ զծճծ աշխարհում շրջագործելու... Բո տեղը թէ՛ն յաղթ աստուածների գոռ ապարանքներն են անհաս, աննար... Բո տեղը թէ՛ն աստուածաւիպել կոյս անուրջներն են ցնոր... Բայց կայ ու շրջի՛ր երկրի երեսին ի սէր այն խիղախ անյաղթ տենչանքի, որ մի օր ունայն այս կեանքը պիտ դայ հոգու և մտքի աստուածութիւնը... Վկայ է յոյս-կոյս այդ վեհ երազին արեղակը վառ, որ անմահութեան և փառաց պսակ ունի հակատին:

Դնա՛, մեծ ես գու... Անհաս ու ոսկի սուրբ աղատութեան կամարը երազ ասպարէզ է քեզ: Ունայն, մանրոգի երկրի երեսին չը կայ քեզ համար քեզի անաչառ դատող դատաւոր... Մեծ ես չափազանց... Մտքից էլ ես վեր... կեանքից էլ ես վեր... Վեհ ես չափազանց, որպէսդի մարդիկ կարողանան քեզ դատի ենթարկել...

Խղճով ու թշուառ իմ ղրախօսներ... Եւ
 դուք մերթափի ձեր ծով-մանրութեան, ձեր հոգու
 աժան, խղճով սաղրութեան ունայն կրքերով առաջ
 էք դալիս դուր պղտորելու քաջ բանաստեղծի վե-
 հութիւնն անհաս... Փոքրութեան ծնունդ, կուրու-
 թեան աղիղ դէշ-դարշ զաւակներ... Զուր էք ստա-
 հակ դուք առաջ մղուում... Կարող էք այդպէս դուք
 միայն ցոյց տալ ձեր հոգու, սրտի կուրութիւնը
 դէշ: Դուք կոյր էք առ միշտ: Եւ միթէ ձեզ պէս
 խեղճ, ողորմելի մարդկանց է տրուած քննադատել
 այն, ինչ վեր է կեանքից... այն, ինչ երկնքի ծնունդ
 է միայն, ինչ աստուածների յաղթ երազների փր-
 ջիցն է քաղուած... Երկիրը միթէ այնքան է ըն-
 կել—կուրացել, որ դուք, սին ունայն զաւակներ,
 ձեր ծանծաղութեամբ պիտ կարողանաք չափել—
 դնահատել անեղ ու անհուն խորութիւնը մեծ...
 Հա՛, հա՛, հա՛, խղճով ու ծաղրելիներ... հա՛, հա՛, հա՛,
 թշուառ ու ծաղրարժաններ... ձեզ պէտք է շղթայ.
 դուք զիտէք սիրել սե՛ ու սո՛ւղ կապանք... Զեր
 միտքն ու հոգին անկարող են վե՛ր, Անհունի լան-
 ջեր սուբսուրալ-ճախրել: Դուք փոքր էք, չունէք
 շանթէ հոգու թե՛: Երկչոտ էք անչափ... Փառաց
 ու պատուի ցնորք ու երազ կայծակը անեղ օտար
 է ձեզի... Վախում էք դուք նորա դե՛ բոցից:
 Ծնուած էք միայն դուք միշտ սողալու, սողալ էլ
 գիտէք ու սիրում էք այդ: Սողալ գիտցողը ճախ-
 րել չի կարող...

Գնա՛ գրքոյկ իմ... Դու մեծ ես անհուն, աղաւտ
ես և յաղթ: Քո անհաս փառքի խորութիւնը վեհ
ընդունակ է լոկ կուռքերը երկրի խիստ առհամար-
հել... Հպարտ երկնքից փառքի ու կոչման յաղթա-
նակը սուրբ ես գողացել եմ և քեզ եմ տուել...
Աստուածավայել քո հպարտութեան առաջաստը
բոց... Դու աստուածներին ես պատկան-արժան:
Եւ դիտես յարգել այն կիրքը հոգու, որ վեր է ճա-
խրում, որ դիտէ տենչալ, Անհունը զրկել, Անհասը
ծծել... Դու դիտես սիրել վեհ բոցը հոգու, բոցկլ-
տող յանուն անյաղթ Անհունի, հոգու մեծութեան,
պատուի մեծութեան... Սովոր ես դու լոկ սիրել
քաջարի այն խիղախ հոգին, որ վառւում է միշտ
լոկ նորա համար, որ մի օր այս նեղ աշխարհում
լինի կայծակէ հոգին, դերմարդը անեղ...

Գնա՛, գրքոյկ իմ... Եթէ ծաղրարժան մարդիկ
խիղախեն քեզ դատապարտել, քեզ վերայ թքել...
այդ ոչինչ իսպառ... Դու բարձրես անչափ... Ինչ-
պէս որ երկրից էլնող զոլորչին, որ քաշում է
վեր, դէպի մայր երկինք, անծրեւի շիթով թափ-
ւում է կրկին երկրի երեսին, այդպէս թուրք այն
հասնելու չէ քեզ. անծրեւի պէս նա պիտ նորից
թափուէ թրողի հակտին... Որովհետեւ դու բարձր
ես անսահման...

Գնա՛ իմ գրքոյկ...

Ս.-Պետերբուրգ.

Յունուարի 10, 1904 թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ս Կ Ո Ի Թ Ի Ի Ն.

	Երես
1 Զօն	3
2 Ընթերցողին	4
3 Այն հաւքեր, որ աշնան...	5
4 Էջ վախ աղիդ...	6
5 Էս կեանքը սեւ բանո	7
6 Դարդիս հետ մեն-մենակ	8
7 Բանաստեղծին	9
8 Սւերակաների մէջ	10
9 Ընկերոջս դերեղմանի վերայ	11
10 Կամօականեր	12
11 Ռ. Մանուէլեանից	15
12 Ես հպարտ եմ անհուն	16
13 Վերլէնից	25
14 ,, ,,	26
15 Իրիկուայ ստուերներ	27
16 Վերջալոյսին	31
17 Ես կը սիրեմ	34
18 Կայծակը ինձ չետ	34
19 Ծնունդ Անհունի	35
20 Ես կը սիրեմ	36
21 Բայրընից	37
22 Հայնէից	38
23 Երբ խոր ծորում	30
24 Խօսք	49

ԱՆՀՈՒՆԻ ՇՈՒՆՉԸ

25	Ալեկոծ կեանքի	42
26	Էրնէկ, էրնէկ...	44
27	Ես փառք եմ սփրում	45
28	Հողու սով, Ողու սով	46
29	Օ՛, թողէք ինձ աղատ	48
30	Թէ հնար լինէր	51
31	Հողի-Մայր	52
32	Կեանքի Ողին	58

ԱՆՀՍՍ ԴԱՐՆԱՆ ԸՂՁԵՐԸ

33	Գէշ-դարշ մանրսւթեան	63
34	Էս լուռ զիշերին	65
35	Աժդահայ եղբայր	68
36	Անհունի երգը	69
37	Դարբին	73
38	Միայն քեզ, որ չը կ'ս...	75
39	Երազ շանթերի	76
40	Մէկ փունջ անուրջ	77
41	Կրակ փողով հալարտ սրտիս	78
42	Սիրոյ պսակ արշալոյսին	79
43	Ես չեմ պապակում	80
44	Կայծակի նման	81
45	Կերթամ մէրիկ, կերթամ հեռուն	82
46	Լացէք մայրեր	90

ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

47	Գարուն	93
48	Բանաստեղծը	95
49	Ահ, ուր է... չը կայ...	97
50	Ես գիտեմ սիրել	98
51	Դէպի ինձ	99
52	Կեանքը թռիչք է	101
53	Երգս ու հողիս	107
54	Յուզեր	109
55	Տենչանքներ	111

ՍԻՐՈՅ ՇԻՐԻՄԸ

56	Խորհուրդը կեանքի	125
57	Երազներ	126
58	Վերջաբան	129



ԳԱՍ Հիմնարար Գիտ. գրադ.



220028285

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱՆԻ

ԱՐԻՒՆ ԷՋԵՐ—ԴԻՄԵԼ, ԹԻՓԼԻՍ ԳՈՒՏԵՐՈՒ
ՐԵՐԳ՝ ՈՒ ԳԵՆԴԻՐՈՆԵԱՊՈՆ ԳՐԱՎԱՃԱՐԱՆ

ՆՈՅՆԵՐ

ԱՆՇՈՒՆԻ ԷՋԵՐՈՒԹ ԴԻՄԵԼ, ԹԻՓԼԻՍ ԴՈՒՐ
ՑԵՄԵՐԵՐԻ ՈՒ ԳԵՆԴԻՐՈՆԵԱՊՈՆ ԴՐԱՎԱՃԱՐԱՆ
ՆՈՒՈՆԵՐ ՆԻ ԳԵՏԵՐՐՈՒՐԻ ԴՈՒՇԳԻՆԵՆ

ԱՐԱԳԱՏԻՊ, ԼԵՇՏՈՒԿՈՎ Փ. 4.

II
A 28285

ՄԵԿ
ՕրբԼակ